


8290

Ա. Ա. ՃԴԱՆՈՎ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՈՒՄԸ ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ  
ԽՈՐՉՐԴԻ՝ ՆՈՐ ԸՆՏՐԱԿԱՆ ՍԻՍՏԵՄՈՎ  
ԿԱՏԱՐԵԼԻՔ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՅԵՎ  
ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՈՒՄԸ

Զեկուցում Համ Կ (թ)Կ Կենտկամի Պլենումում  
1937 թ. Փետրվարի 26-ին



ՀԱՅԿԱՆՍԵՐԱԾ • ԵՎՐՈՎՈՅ • 1937

Պրոլետարիատ, բալոր յերկիրների, միացնե

14 NOV 2009



ՅԿՊՅ  
Ձ-39

Ա. Ա. ԺԴԱՆՈՎ

24 SEP 2006

ԿՈՒՍՍ.ԿՑԱ.ԿԱ.Ն ԿԱ.ԶՄԱ.ԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՆԱԽԱ.ՊԱ.ՏՐԱ.ԱՏՈՒՄԸ ԽՍՀՄ ԳԵՐԱ.ԳՈՒՅՆ  
ԽՈՐՀՐԴԻ ՆՈՐ ԸՆՏՐԱ.ԿԱ.Ն ՍԻՍՏԵՄՈՎ  
ԿԱ.ՏԱ.ՐԵԼԻՔ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՅԵՎ  
ԿՈՒՍՍ.ԿՑԱ.ԿԱ.Ն-ՔԱ.ՂԱ.ՔԱ.ԿԱ.Ն ԱՇԽԱ.ՏԱ.ՆՔԻ  
ՀԱ.ՄԱ.ՊԱ.ՏԱ.ՍԽԱ.Ն ՎԵՐԱ.ԿԱ.ՈՒԹՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

Զեկուցամ Համ Կ (ր) Կ ԿԵՆՏԻԿՈՒՄ Պլենումում  
1937 թ. Փետրվարի 26-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

25 APR 2013

8290




37953-62

ПОДГОТОВКА ПАРТИЙНЫХ ОРГАНИЗАЦИЙ  
К ВЫБОРАМ В ВЕРХОВНЫЙ СОВЕТ СССР  
ПО НОВОЙ ИЗБИРАТЕЛЬНОЙ СИСТЕМЕ  
И СООТВЕТСТВУЮЩАЯ ПЕРЕСТРОЙКА  
ПАРТИЙНО-ПОЛИТИЧЕСКОЙ РАБОТЫ

Доклад на Пленуме ЦК ВКП(б)  
26 февраля 1937 г.

Армаптиздат, Ереван, 1937



ЖДАНОВ А.А.

ՇՐՋԱԴԱՐՁԸ ՅԵՐԿՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ  
ՅԵՎ ՄԵՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Քեկերներ, ԽՍՀ Միության նոր Սահմանադրությունն ընդունվելու կապակցությամբ մենք պետք են ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի և աշխատավորության պատգամավորների Խորհուրդների ընտրությունները կատարենք՝ վերևից մինչև ներքեւ նոր ընտրական սփոռեմով։ Մեր կուսակցության առջև խնդիր է ծառացած՝ նախապատրաստվել ընտրություններին։

Այդ նախապատրաստության ընույթը, նրա ծավալը, մասշտաբը և կուսակցական աշխատանքի վերակառուցումը, վոր կազմաձ ենքա հետ, վորոշվում են այն փոխակերպությունների խորությամբ, վորոնք բղխում են նոր Սահմանադրությունից՝ մեր յերկրի քաղաքական կյանքի համար։

Նոր Սահմանադրությունը մտցնելը շրջադարձ է նշանակում յերկրի քաղաքական կյանքում։ Այդ շրջադարձի եյությունն ե՝ ընտրական սփոռեմի հետագա ավելի դեմոկրատացումը՝ Խորհուրդների վոչ մովին հավասար ընտրությունները հավասարով, բազմա-

տիճանը՝ ուղղակիով, բացը՝ փակով փոխարինելու  
խմառով:

Նոր Սահմանադրությունը մտցնելը զեն և զցում  
այն բոլոր սահմանափակումները, վորոնք գոյություն  
ևն ունեցել մինչև այժմ այսպես կոչված ձայնազուրկ-  
ների համար:

Յեթե առաջ, նախքան նոր Սահմանադրությունը  
մտցնելը, Խորհուրդների ընտրությունները հավասար  
չեն, ապա այժմ վերացել է ընտրությունների հա-  
վասարությունը սահմանափակելու անհրաժեշտու-  
թյունը, և բոլոր քաղաքացիներն իրավունք ունեն հա-  
վասար հիմունքներով մասնակցելու ընտրություննե-  
րին:

Յեթե առաջ իշխանության միջին և բարձր որ-  
գանների ընտրությունները բազմաստիճան են, ա-  
պա այժմ, նոր Սահմանադրության համաձայն, բոլոր  
Խորհուրդների ընտրությունները կատարելու յեն բո-  
լոր քաղաքացիներն անմիջականորեն՝ ուղղակի ընտ-  
րությունների միջոցով:

Յեթե առաջ, հին Սահմանադրության համաձայն,  
ընտրությունների ժամանակ քվեարկությունը կատար-  
վում էր բաց և ըստ ցուցակների, ապա այժմ, նոր  
Սահմանադրության համաձայն, ընտրությունների  
ժամանակ քվեարկությունը լինելու յե գաղտնի և ըստ  
ընտրական շըջանների առաջադրած առանձին թեկնա-  
ծությունների:

Վերջպես, Սահմանադրությունը մտցնում է հա-  
մաժողովրդական հարցումն՝ այսպես կոչված ոեֆե-  
րենդում:

Ի՞նչ են նշանակում ընտրական սիստեմում կա-  
տարված այդ փոփոխությունները:

Դրանք նշանակում են խորհրդային որդանների  
նկատմամբ մասսաների ունեցած վերահսկողության  
ուժեղացումը և մասսաների հանդեպ խորհրդային որ-  
դանների ունեցած պատասխանատվության ուժեղա-  
ցումը: Նոր ընտրական սիստեմը կամ քաղնդի ժողո-  
վրդական ընտրյալների կապն ընտրող մասսաների  
հետ: Նա հզոր խթան կհանդիսանա՝ բարելավելու  
խորհրդային որդանների աշխատանքը, վերացնելու  
մեր խորհրդային կազմակերպությունների աշխատան-  
քը բյուրոկրատական թերություններն ու խեղաթյու-  
րումները, իսկ այդ թերությունները, ինչպես դի-  
տեք, չառ եյական են:

Դադունի քվեարկությամբ ընդհանուր, հավասար  
և ուղղակի ընտրական իրավունք մտցվելու հետևան-  
քը կլինի մասսաների քաղաքական ակտիվության հե-  
տագա ուժեղացումը, աշխատավորների նոր խալերի  
ներկրագլումը պետության կառավարման աշխատան-  
քին:

Դրանով իսկ պրոետարիատի դիկտատուրան դառ-  
նում է բանվոր դասակարգի կողմից հասարակու-  
թյան պետական զեկավարման ավելի ձկուն և, հետե-  
վաբար, ավելի հզոր սիստեմ, պրոլետարական դիկ-  
տատուրայի բաղան ընդարձակվում է, նրա հիմքն ա-  
վելի հասաւատուն և դառնում:

Լենինիզմը սովորեցնում է.

«Պրոլետարիատի դիկտատուրան ունի իր ժա-  
մանակաշրջանները, իր հատուկ ձևերը, աշխա-  
տանքի բազմազն մեթոդները: Քաղաքացիական  
պատերազմի ժամանակաշրջանում առանձնապես  
աչքի յե զարկում դիկտատուրայի բռնի կողմը..

Սոցիալիզմի շինարարության ժամանակաշրջանում, ընդհակառակը, տուանձնապես աչքի յեղարկում դիկտատուրայի խաղաղ, կաղմակերպական, կուլտուրական աշխատանքը, հեղափոխական որինականությունը և այլն։ Բայց դրանից դարձյալ բնակչի չետեղում, վոր դիկտատուրայի բռնի կողմը շինարարության ժամանակաշրջանում մեջտեղից վերացել է կամ կարող ել վերանալ։ Ճշման որդանները, բանակը և մյուս կաղմակերպություններն անհրաժեշտ են հիմա, շինարարության մոմենտում, նույնպես, ինչպես քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում։ Առանց այդ որդանների առկայության անհնար և դիկտատուրայի վորուն չափով ապահոված չինարարական աշխատանքը։ Հարկանոր չե մոռանալ, վոր հեղափոխությունը հաղթել ե տռայժմ ընդամենը միայն մի յերկրում։ Հարկավոր չե մոռանալ, վոր քանի դեռ կա կապիտալիստական շրջապատումը, կլինի նաև ինտերվենցիայի վտանգը՝ այդ վտանգից բղխող բոլոր հետևանքներով»։ (Ստալին, «Լենինիզմի հարցերի չուրջը»)։

Վոր մեր դիկտատուրայի խաղաղ, կաղմակերպական, կուլտուրական կողմերի կողքին չի վերացել նրա բռնի կողմերի անհրաժեշտությունը, ակնառու կերպով ցույց ե տալիս նուխարինի-Ռիկովի դորձի մեր հենց նոր քննարկած հարցը։ Բանիոր դասակարգի դիկտատուրային այսուհետեւ ևս վիճակված ե անողոք ձեռքով ընկճել թշնամի կապիտալիստական դասակարգերի մնացորդների և Փաշխատական բուրժուազիայի դործակալներ՝ արոցկիստների, դինավե-

վականների, աջերի ու ժողովրդի մյուս թշնամիների գիւմառությունը։

Ընկեր Ստալինը մեզ սովորեցրել ե, վոր մեղ հարկավոր և բանվոր դասակարգի ուժեղ և հիմք դիկտատուրա, վորպեսզի հողմացրիլ անենք մեռնող դասակարգերի վերջին մնացորդները և վոչչացնենք նրանց զողավարի մեքենայությունները։

Դեմոկրատական ընտրություններ անցկացնելը շատ լուրջ դործ է։ Դա մեր կուսակցության համար շատ լուրջ քննություն ե՝ մասսաների հետ նրա ունեցած կապը, մեր կուսակցական կաղմակերպությունների աշխատունակությունը և մասսաներում նրանց ունեցած հեղինակությունն ստուգելու իմաստով։ Ընտրությունների անցկացումը կպահանջի մեր կուսակցության բոլոր ուժերի հսկայական լարում։

Մեր յերկրի քաղաքական կյանքում տեղի ունեցած այդ շրջադարձն ըստ ամենայնի դիմած զիմավորելու համար մեր կուսակցությունը պետք ե զրկիսավորի այդ շրջադարձը և ապահովի իր զեկավարութերը յերկրի զերագույն որդանների ընտրությունների դորձում։

Ի՞նչ ե հաշնակում դիմավորել և կուսակցության զեկավար զերն ապահովել զերագույն որդանների ընտրությունների ժամանակ։ Ի՞նչ խնդիրներ պետք ե լուծի կուսակցությունը։

Ամենից առաջ՝ պետք ե նկատի ունենալ, վոր մեր աշխատողները զործ են ունենալու գրության վարունորության հետ։ Մենք առաջին անգամն ե, վոր ընտրությունները կատարում ենք ընտրական նոր սիստեմով։ Մենք վարժված չենք ըստ առանձին թեկնածությունների, զաղանի քվեարկության սկզբունքով և

այլն ընտրություններ կառարելու ասպարեզում։ Դա վորոշ դժվարություն և ներկայացնում մեր կուսակցական կաղմակերպությունների համար։

Յերկրորդ՝ գլխավորել մեր յերկրի քաղաքական կյանքում տեղի ունեցած շրջադարձը և ղեկավարել ընտրությունները—նշանակում և ապահովել Սահմանադրության հաստատած ընտրական նոր սխստեմի վակատար պահպանումը, այսինքն՝ խստիվ պահպանել դադարի քվեարկությամբ ընդհանուր, ուղղակի, հավասար ընտրական իրավունքի սկզբունքները։ Այդ նշանակում ե, վոր մեր կուսակցական կաղմակերպություններն իրենց աչքի լույսի պես պետք ե պահպանեն մեր ընտրական որենքն ամեն մի խստումից։

Յերրորդ՝ մեր կուսակցական կաղմակերպությունները պետք ե պատրաստ լինեն ընտրական պայքարի համար։ Ընտրությունների ժամանակ մենք զործենք ունենալու թշնամական ազիտացիայի ու թշնամական թեկնածությունների հետ։ Վոր այդպիսի հնարավորությունը սեալ ե, յերեւմ ե նրանից, վոր արդեն այժմ տեղի ունի հակախորհրդային տարրերի վորոշակութացում, հատկապես առաջիկա ընտրությունների կամակցությամբ։ Մեր կուսակցական կաղմակերպությունները պետք ե ըստ ամենայնի դինված գիտավորեն թշնամական տարրերի փորձերը՝ ողտագործելու նոր Սահմանադրության տվյալ լեզաւ հնարավորությունները։

Քանի դեռ մեր մարդիկ նիրհում են ու շարժվում, թշնամիներն արդեն գործում են և ուժեղ կերպով պատրաստվում են ընտրություններին։

Տորրորդ՝ գաղտնի ու անձնապես կատարվող

քվեարկությունը, ի տարբերություն բաց և ըստ ցուցակների կատարվող քվեարկությունից, կնշանակի յուրաքանչյուր առաջադրված թեկնածության համար կուսակցության կրած պատասխանատվության բարձրացումը։ Ընորված լինելու համար մեր թեկնածուները լավ պետք ե հայտնի լինեն այն շրջանի ընտրողներին, վորտեղ կառաջադրվեն նրանք։ Նրանց դործունեյությունը պետք ե լավ ծանոթ լինի ընտրողներին։

Գաղտնի քվեարկությամբ կատարվող ստուգումը կհանդիսանա մեր աշխատողների ամենահիմնավոր ստուգումը, վորովհետև գաղտնի քվեարկությունը շատ ավելի լայն հնարավորություններ ե տալիս մասսաների տեսակետից վոչ ցանկալի և վոչ պիտանի թեկնածությունները մերժելու համար, քան յեղել և մինչև այժմ։ Այդ պետք ե վորոշակի պատկերացնել։

Հինգերրորդ՝ պետք ե հազթահարել մեր կուսակցական ու խորհրդային վորոշ աշխատողների մեջ յեղած վնասակար հոգեբանությունը, վորոնք կարծում են, թե ժողովրդի վատահությունը կարելի յէ ձեռքբերել ձրիաբար և կարելի յէ հանդիսա քնել, սպասելով, վոր պատղամավորական մանդատները կհրամցնեն տանը, վորոտալից ծափերի տակ, չնործիվ իրենց նախկին ծառայությունների։ Գաղտնի քվեարկության ժամանակ վատահությունը ձրի չի ստացվի։

Մեղ մոտ կուսակցական և խորհրդային կաղմակերպություններում կա աշխատողների բավականին ստվար մի խալ, վորոնք զտնում են, թե իրենց անելիքներն, իսկապես, վերջանում են այն ժամանակից, յերբ նրանք խորհրդի անդամ են ընտրվում։ Այդ են վկայում բաղմաթիվ պատասխանատու աշխատողների չհաճախելը նորհուրդների պլենումներին, մեր նոր-

Հուրդների պատղամավորական խմբակներին ու սելցիաներին, նրանց խուսափելը՝ պատղամավորական տարրական սլաքտականությունները կատարելուց:

Ենհրաժեշտ է ջախճախել մեր աշխատողների հոգեբանության նմանորինակ մնացուկները, պետք է մեր աշխատողների մեջ դաստիարակել այն դիտակցությունը, թե նրանք ուստաժանատու յեն ընտրողների առջև, նկատի ունենալով, վոր յուրաքանչյուր ընտրյալ հանդամանորներ ու խորմակողմանի կերպով քննվելու և ստուգվելու յե իրենց՝ մասսաների կողմից:

Կոպիտ սխալ կլիներ մինչև ընտրությունների մամենը հետաձգել այդ մնացուկների դեմ պայքարելը: Մենք առանց հապաղման պետք են ձեռնամուխ լինենք անշեղորեն բարեկավելու մեր խորհրդային կազմակերպությունների աշխատանքը, նրանց կազը մասսաների հետ, ուժեղացնելու մեր խորհրդային աշխատողների պատասխանատվությունը մասսաների առջև:

Վեցերորդ՝ հարկավոր են հենց այժմ աշխատողների մեջ դաստիարակել այն դիտակցությունը, վոր նոր ընտրական սխառեմը նշանակում է շատ ավելի լայն հրապարակայնություն խորհրդադիմին կազմակերպությունների դործունելության մեջ և վոր նրանց դործունելությունն ընթանալու յե մասսաների աչքի առջև, վոր նրանց պատասխանատվությունը մասսաների առջև ավելի լիակատար են լինելու: Խորհուրդների շատ պատղամավորներ — մեր կուսակցության անդամներ — սովորել են պատասխանատու լինել միմիայն իրենց կուսակցական կազմակերպության առջեւ: Խորհրդային մեր շատ աշխատողներ այն մարդկանցից, վորոնք հակումն ունեն գեպի բյուրոկրա-

տիզմը, վորոնք խոշոր թերություններ ունեն աշխատանքում, պատրաստ են իրենց աշխատանքի մասին տասն անդամ հաշիվ տալ կուսակցական կոմիտեյի բյուրոյի առջև, նեղ ընտանելան ըրջանում, քանի հանդես դալ խորհրդի պլենումում, քննադատել իրենց և լսել մասսաների քննողատությունը: Գետք են վերջ լսել անպատասխանատվության այդ պրակտիկային:

Յութերորդ՝ դիմավորել յերկրի քաղաքական կյանքում տեղի ունեցած ըրջագարձը և ապահովել դեմոկրատական ընտրությունները՝ նշանակում են, վոր մեր կուսակցական կազմակերպությունները չպետք են սպասեն, մինչև վոր մասսաները նրանց ներքինից հրենդեպի քննադատություն, մերժեն մեր թեկնածությունները, այլ իրենք պետք են կանգնած լինեն քննադատության և անպետք թեկնածությունների մերժման դլուխը, առանց սպասելու նրանց տապալմանը դադանի քլիարկության ժամանակ: Ընդվորում մեր կուսակցական կազմակերպությունները պետք են սովորեն բարեկամական քննադատությունը տարբերել թվանամականից: Մեզ մոտ հաճախ այնպես են լինում, վոր մեր խորհրդային որդանների դործունելության առանձին թերությունների ու խեղաթյուրումների դեմ աշխատավորների ունեցած դժողովությունը դնահատվում ու դիտվում են վորպես թշնամական քննադատություն: Բարեկամական քննադատությունը, վորը յերբեմն շատ սուր են լինում, թշնամու քննադատությունից տարբերելու կարողությունը, մեր կուսակցական կազմակերպություններից պահանջում են կուսակցական-քաղաքական դաստիարակության բարձր մակարդակ և մեծ զգայունություն:

Նոր ընտրությունների ժամանակ կտրող են պատա-

Հել, վոր թշնամի տարրերը մեր թեկնածուների զեմ  
աղիտացիա մզելու փորձեր անեն: Մեր աշխատավոր-  
ներին հարկ է լինում դժվարին բավականաչափ կամ-  
պանիաներ մզել մթերման աշխատանքի, շինարարու-  
թյան և այլ գանազան ճակատամասերում, իսկ այդ-  
պիսի կամպանիաներն առանց վորոշ ճնշման չեն կա-  
տարվում: Այդ մտնում է բանվոր դասակարգի դիկ-  
տատուրայի հասկացողության մեջ: Այս ճնշումից  
մենք չենք հրաժարվում նաև այսուհետեւ և ծիծա-  
ղելի կլիներ հրաժարվել դրանից: Անշուշտ դեմաղո-  
զիա կտեղծվի այդ գծով մեր աշխատողների ամեն  
տեսակ թերություններն ուղղությամբ:  
Խոսքը վերաբերում է մեր գյուղխորհուրդների, ըրջա-  
նային գործկոմների և այլ հիմնարկների կազմերին:  
Կուսակցական կազմակերպությունները պետք է կա-  
րողանան իրենց պաշտպանության տակ վերցնել այդ  
մարդկանց: Այդ չի կարելի աչքաթող անել:

Ութերորդ՝ անկուսակցականների հարցը: Շատ  
վնասակար ու վտանգավոր կլիներ, յեթե նոր ընտ-  
րությունների ժամանակ կրկնվելին ընտրությունների  
հին պրակտիկայում տեղի ունեցած սխալները, —այն  
ե՛ անուշադիր վերաբերմունքը դեպի անկուսակցա-  
կանների թեկնածությունները, յերբ Խորհուրդներում  
կուսակցական ազգեցությունն ապահովելու նպատա-  
կով, անկուսակցական թեկնածությունները չեյին վա-  
յելում այն անհրաժեշտ ուշադրությունն ու ոժանդա-  
կությունը, վորոնք բղխում են զեկավարելու և մաս-  
սաների հետ կապ պահպանելու բոլշեվիկյան ըմբռնման  
հիմունքներից: Նկատի ունեցեք, վոր մեր յերկրում  
կոմունիստները յերկու միջին են, իսկ անկուսակ-  
ցականները «մի քիչ» ալելի յեն: Հետևաբար, յեթե

մենք ուղղում ենք դլխավորել ընտրությունները, պետք  
է ուժեղացնենք մեր ազգեցությունը և մեր կապն ան-  
կուսակցականների հետ և ոժանդակենք, այլ վոչ թե  
հետ մզենք մասսաների վստահությունը վայելող ան-  
կուսակցական թեկնածությունները:

Սրանք են այն մի քանի հարցերը, վորոնք վերա-  
բերում են ընտրությունների նախապատրաստություն-  
ների դեկալարմանն ու կազմակերպմանը: Նրանք հեր-  
թի յեն գրվել վոչ թե հեռավոր հեռանկարների կար-  
գով, այլ վորպես մարտական, միանգամայն անհետա-  
գութիւն ու կենսական խնդիր:

## ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՈՐԳԱՆՆԵՐԻ ԸՆՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆ ԱՆՀԱՄԱՍԵՂԵԼԻ ՅԵ ԲՈԼՇԵՎԻԶՄԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՅԵՏ

Ի՞նչ է պահանջվում կուսակցությունից, վորոնք-  
ով նա կարողանա անցնել նոր, մինչև վերջը դեմո-  
դի նա կրատական ընտրությունների դլուխը: Վորոնք են  
այն զիսավոր պայմանները, վորոնք ապահովում են  
յերկրի քաղաքական կյանքում տեղի ունեցած պա-  
տարձի դեկավարումը կուսակցության կողմից:

Դրա համար պահանջվում է, վորպեսզի կուսակ-  
ցությունն ինքն անցկացնի հետեւղական դեմոկրա-  
տական պրակտիկա, վորպեսզի նա ներկուսակցական  
կյանքում մինչև վերջը կիրառի դեմոկրատական  
ցենտրալիզմի հիմունքները, ինչպես այդ պահանջում  
է մեր կուսակցության կանոնադրությունը, վորպեսզի

կուսակցությունն ինքն ունենա անհրաժեշտ այնպիսի  
պայմաններ, վորով կուսակցության բոլոր որդաններն  
ընտրովի լինեն, վորպեսզի կուսակցության ներսում  
լիակատար չափով զարդանա քննադատությունն ու  
ինքնաքննադատությունը, վորպեսզի կուսակցական  
մասսայի հանդեպ կուսակցական որդանների ունեցած  
պատասխանատվությունը լիակատար լինի և ինքը,  
կուսակցական մասսան, լիովին ակտիվացած լինի:

Ենինիդը սովորեցնում է, վոր բանվոր զառու-  
կարդի ակտիվության վերելքը, վորը ձգտում ենք  
մենք ձեռք բերել, խորհրդային դեմոկրատիզմը մին-  
չեւ վերջը կերպուելու կաղակցությամբ, լուրջ և մեծ  
զործ է: Բանվոր զասակարդի ակտիվությունը բարձ-  
րացնելու համար ամենից առաջ հարկավոր և ակաբ-  
վացնել իրեն՝ կուսակցությանը: Հարկավոր է, վոր  
ինքը կուսակցությունը հաստատապես ու վճռաբար  
վորք դնի ներկուսակցական դեմոկրատիայի ուղին,  
վոր մեր կաղմակերպությունները մեր շինարարու-  
թյան հարցերի քննարկմանը ներզբավեն կուսակցու-  
թյան այն լայն մասսաներին, վորոնք կերտում են  
մեր կուսակցության բախտը: Առանց դրան ավելորդ  
ե խոսել բանվոր զասակարդի ակտիվացման մասին:  
Այդ և սովորեցնում մեզ ընկեր Ստալինը:

Կարելի՞ յե արդյոք ասել, վոր մեր բոլոր կու-  
սակցական կաղմակերպություններն արդեն պատրաստ  
են կատարելու այդ սկայմանները և թե նրանք արդեն  
վերակառուցվել են դեմոկրատական ձևով:

Դժբախտաբար, լիակատար համոզվածությամբ  
Մ կարելի ասել այդ:

Վորոնք են այն փաստերը, վորոնք վկայում են,



թե այդ չի կարելի լիակատար համոզվածությամբ  
ասել:

Դրա մասին և խոսում կուսակցության կանոնա-  
դրությունը և ներկուսակցական դեմոկրատիզմի հի-  
մունքները խախտելու պրակտիկան վորոշ կազմակեր-  
պություններում:

Վորոնք են այդ խախտումները:

Ինչպիս հայտնի յե, կուսակցության կանոնա-  
դրությունը թելալըում և սկզբանական կազմակերպու-  
թյունների կոմիտեների ընտրությունները կատարել  
տարին մի անդամ, քաղաքային ու շրջանային կոմի-  
տեներին՝ տարին մի անդամ, մարզային, յերկրային  
կոմիտեներինը ու ազգային կոմիտեների կենտրոնական  
կոմիտեներինը՝ մեկ և կես տարին մի անդամ: Այդ-  
պես և տում կանոնադրությունը:

Յեթե դիմենք պրակտիկային, ապա փաստերը  
խոսում են այն մասին, վոր կանոնադրության այդ  
պահանջը մեզ մոտ խախտված է մի շարք կազմակեր-  
պություններում: Վերջին յերկու-յերեք տարում մար-  
զպություններում: Վերջին յերկու-յերեք տարում մար-  
զպային, յերկրային կոմիտեների և ազգային կոմիտե-  
ների կենտրոնական ընտրությունները կատարվել են  
ամենայն այն կաղմակերպություններում, վորոնք ա-  
ռաջին անդամն են ստեղծվել նոր մարզեր կաղմվելու  
կապակցությամբ (կալինինի, կրասնոյարսկի, Ռժուկի,  
կապակցությամբ (կալինինի, կրասնոյարսկի, Ռժուկի,  
Որենքուրդի և Յարոսլավիլի կաղմակերպությունները):  
Մեր մարզային, յերկրային կոմիտեների և ազգային  
կոմիտեների կենտրոնական ընտրություններում, վրջկոմների  
և սկզբանական կուսկոմիտեների մեծ մասը գոյություն  
ու կապակցության XVL համագումարի ժամանա-  
կունի կուսակցության XVII համագումարի ժամանա-  
կունի այսինքն այն ժամանակաշրջանից, յերբ  
կարջանից, այսինքն այն ժամանակաշրջանից, յերբ  
տեսականությունը կուտորդանների ընտրությունների



ընդհանուր կամպանիա։ Այդ գրությունից, ինչպես արդեն ասաւ, բացառություն են կազմում նոր յերկիրներն ու մարդերը, ինչպես և առանձին շրջանային ու քաղաքային կազմակերպություններ, գլխավորապես կուսակցական աշխատանքում տեղի ունեցած ձախողումների կապակցությամբ։

Նշանակում ե՝ մեր կուսակցության որենքները խախտած են, թիվետ մենք յերգվում ենք կանոնադրությունը, անգիր ենք անում կանոնադրությունը խմբակներում, կուսակաստաթղթերի ստուգման ու փոխանակման ժամանակ կուսակցության անդամներից պահանջել ենք դիտենալ կանոնադրությունը։ Ստուգումից պարզվում ե, վոր մենք ինքներս անթույլատրելի կերպով լիբերալ վերաբերմունք ենք ցույց տալիս մեր սեփական կուսակցական որենքներին։

Այսուհետև, մեր կուսակցության կանոնադրությունը պահանջում ե կուսակցության բոլոր դեկալար որդանների ընտրականությունը վերևից մինչև ներք։ Այդ ե պահանջում մեր կուսակցության կազմակերպական կառուցման հիմնական սկզբունքը՝ դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքը։

Կուսակցության կանոնադրության § 18-ն ասում ե, վոր «կուսակցության կազմակերպական կառուցման դեկալար սկզբունքը գեմոկրատական ցենտրալիզմն ե, վորը նշանակում ե՝

ա) կուսակցության բոլոր դեկալար որդանների ընտրականությունը վերևից մինչև ներք։

բ) կուսակցական որդանների պարբերական հաշվետվությունն իրենց կուսակցական կազմակերպությունների առջև։

գ) կուսակցական խիստ կարգապահություն և

փոքրամասնության յենթարկվելը մեծամասնությամբ։ Պարձրադրույն որդանների վորոշումների անպայման պարտադիր լինելն ստորին որդանների և կուսակցության բոլոր անդամների համար։

Մեր կուսակցության այդ հիմնական կազմակերպական սկզբունքը մի շարք կազմակերպություններում պահանջած ե։ Պէնումի անդամներին, համարուեն, խախտված ե։ Պէնումի անդամներին, հայտնի յեր, թե մեր կուսակցական գործի համար ինչպիսի վնասակար հետևանքների հասցըց կուսակցության կանոնադրության խախտման պրակտիկան կիելի, Ազով-Սևծովյան և այլ կազմակերպություններում, վրատեղ կանոնադրության մոռացումը՝ ընտրականությունից դեպի կուսակցական աշխատանքի աղաղակող թափթափածությունը շեղվելու իմաստով՝ հենց նպաստեց թշնամական տարրերի սողոսկմանը կուսակցական դեկալար որդանների մեջ։

Ընտրականության ասպարեզում մեր կուսակցության կանոնադրության այդպիսի ամենալուրջ խախտում եր հանդիսանում վոչչով չարդարացվող այն տարածված պրակտիկան, յերբ զանազան դեկալար աշխատողներին կոոպտացիայի յեն յենթարկում վորակես կուսակցական կոմիտեների, շրջկամների, քաղ-կոմների, մարդկոմների, յերկրկոմների և պղպջին կոմկուսակցությունների կենտրոնների սկզբումների անդամ։

Համկ(բ)կ կենտրոմի տրամադրության տակ յեղած տվյալներն ասում են, վոր կոոպտացիայի վնասակար պրակտիկան արմատացել և ավելի խորն ե առաջցել։ Կոոպտացիայի պրակտիկան խախտում ե կուսակցության անդամների որինական իրավունքը՝ մասնակցելու իրենց դեկալար որդանների ընտրություններից։

ըին: Զե՞ վոր կոռպտացիայի ժամանակ կուսակցության անդամները զրկվում են ընտրություններին մասնակցելու հարավորությունից, վոչ-պիտանի թեկնածուներին մերժելու հարավորությունից, նրանց կարծիքն առհասարակ չեն հարցնում, վորովհետև կոռպտացիան կատարվում և պլենումում:

Կոռպտացիան կիրառվում է չափազանց լայն կերպով: Այդ մի արատ ե, վորով տառապում են մի ամբողջ շարք կազմակերպություններ:

Մարզկոմներում, յերկրկոմներում, տղային կոմիտակցությունների կենտրոններում վարպես պլենումների անդամ կոռպտացիայի յենթարկվածները կազմում են 11,6 տոկոս: Այս միջին թիվն ե: Առանձին կազմակերպություններում կոռպտացիայի յենթարկվածների տոկոսը հասնում է մինչև 22,8%-ի (Կիելի կազմակերպություն) և նույնիսկ մինչև 26,2 տոկոսի (Բելոռուսիա), այսինքն՝ պլենումի քառորդ մասից ավելին կոռպտացիայի յենթարկվածներ են:

Երջկոմների և քաղկոմների կազմի մեջ կոռպտացիայի յենթարկվածներ կան-Մոսկվայի կազմակերպության մեջ՝ 17 տոկոս, Լենինգրադի՝ 17,2 տոկոս, Ազով-Սևծովյան՝ 17,5 տոկոս, Դնեպրոպետրովսկի՝ 26,7 տոկոս, Բելոռուսիայի՝ 28,9 տոկոս, Վարչուեժի՝ 29,8 տոկոս, Հայկական՝ 30 տոկոս, այսինքն՝ համարյա մեկ յերրորդ մասը կոռպտացիայի յենթարկվածներ են:

Մարզային կազմակերպություններում շրջկոմների ու քաղկոմների բյուրոների կազմի մեջ կոռպտացիայի յենթարկվածների տոկոսը միջին հաշվով տատանվում է ընտրվածների 14-ից մինչև 59 տոկոսի միջեւ: Արեգայան մարզում, Հայտառանում, Իվանովյան ու

Կարելիայի կազմակերպություններում շրջկոմների ու քաղկոմների բյուրոների անդամների կեսից ավելին կոռպտացիայի յենթարկվածներ են: Այստեղ արդեն դլաւս չեն հանի, թե ինչ ե մնացել որինական կազմից, վորն իր սկիզբն առնում է ընտրություններից:

Կոռպտացիայի թափն այստեղ ե հասնում, վոր, որինակ, կիեվի մարզկոմի պլենումում 1934 թվականի հոկտեմբերի 19-ի պլենումի կազմի մեջ կոռպտացիայի յեն յենթարկել միանդամից 14 հոդի, և այդ թվում Աշրաֆյանին, Զենիսին, Սենչենկոյին, Տողերին և ուրիշներին, վորոնք ներկայումս մերկացված են վորպես կուսակցության թշնամիներ:

Խարկովում, կուսակցության քաղկոմում, քաղաքային կուսակցական ԽԿ կոնֆերենցիայում ընտրված՝ քաղկոմի 158 անդամներից և 34 թեկնածուներից մնացել են միայն 59 հոդի: Այդ կազմը չի կարելի անլանել որինական, վորովհետև մնացել ե ընտրվածներից միայն մեկ յերրորդ մասը: Խոկ վերջին կուսակցական կոնֆերենցիայից հետո անցած ժամանակամիջոցում քաղկոմի կազմի մեջ կոռպտացիայի յեն յենթարկվել 61 հոդի, ըստվորում քաղկոմի բյուրոն, բացառությամբ մեկ ընկերոջ, ամբողջապես կազմված ե կոռպտացիայի յենթարկվածներից:

Ձեզ հայտնի յե, թե կուսակցական կազմակերպության մեջ գործերի ինչպիսի վիճակի հասցրեց Խարկովում գոյություն ունեցող այս գրությունը:

Յեթե դառնանք կուսակցության առանձին շրջանային կոմիտեներին, ապա, անշուշտ, գուք ինքներդ ել բավականաչափ ընդարձակ նյութ կունենաք ձեր արամադրության տակ կոռպտացիայի վերաբերյալ: Յես կարծում եմ, վոր մենք ունենք մեկ տասնյակից

ավելի շրջկոմներ, վորտեղ շրջկոմի անդամների մեծամասնությունն ընտրվածներ չեն, այլ կոռպտացիայի յենթարկվածները։ Որինակ՝ Մալո-Արխանգելսկի շրջանում (Կուրսկի մարզ) 23 հոդուց 18-ը կոռպտացիայի յենթարկվածներ են, Մցենսկի շրջանում (Կուրսկի մարզ) 26 հոդուց կոռպտացիայի յենթարկվածներ են 22-ը, Գոմելի քաղկոմում (Բելոռուսիա) 52 հոդուց կոռպտացիայի յենթարկվածներ են 40-ը, Որանիենբաումի շրջկոմում (Լենինգրադի մարզ) 22 հոդուց կոռպտացիայի յենթարկվածներ են 15-ը, Ռևտու-ժենսկի շրջանում (Նույն այլ մարզի) 12 հոդուց կոռպտացիայի յենթարկվածներ են 11-ը և այլն։

Առանձին քաղկոմների ու շրջկոմների բյուրոների կազմի մեջ կոռպտացիայի պրակտիկան կիրառվում է նույնպես լայնորեն։ Ռևտանովսկի քաղաքային կոմիտեյում բյուրոյի 12 անդամներից 11-ը կոռպտացիայի յենթարկվածներ են։ Ճշուշանովսկի շրջանային կոմիտեյի (Չելյաբինսկի մարզ) բյուրոյի բոլոր անդամները կոռպտացիայի յենթարկվածներ են։ Մեմիալատինովսկի շրջկոմի (Արևելյան Ղաղախոստանի<sup>o</sup> մարզ) բյուրոյի բոլոր անդամները կոռպտացիայի յենթարկվածներ են։ Սոբեսովսկի քաղկոմի (Սվերդլովսկի մարզ) բյուրոյի բոլոր անդամները կոռպտացիայի յենթարկվածներ են և այլն։

Կոռպտացիայի պրիորներն այնուել են հասել, վոր յերեմին կոռպտացիայի յենթարկում կամ թե պլենումի կազմից հեռացնում և փոքրամասնությունը, այսինքն՝ որինական քվորումի մոտին այսուել վոչ մի խոսք լինել չի կարող։ Այդ ցույց է տալիս, վոր քվորումի հասկացողությունը մի ամբողջ շարք տեղերում ջնջվել է, կորսվել։ Որինակ, Խարկով քաղաքի յենի-

նյան ռայոնում 1936 թվականի առլրիլի 4-ին ռայկոմի պլենում ե հրավիրվում՝ ակտիվի մասնակցությամբ, վորտեղ հարց ե զրվում ռայոնական կոմիտեյի կաղաքից մի ամբողջ շարք մարդկանց հեռացնելու մասին։ Զնայած վոր բավականաչափ ժամանակ եր անցել կենտրոմի այն հայտնի վորոշումից հետո, վոր ակտիվի ժողովները պետք ե տեղի ունենան պլենումներց անջատ, այնուամենայնիվ, ռայոնական կոմիտեյի պլենումը գումարվում ե ակտիվի նիստի հետ միասին։ Ինչի՞ համար եր հարկավոր այդ։ Վարպէհետեւ պլենումի կազմում ընտրովի անդամները «պակասում ելին»։ Քաղկոմի անդամներից ներկա ելին 10 թե 11 հոդի, սակայն պլենումն իր կազմից հանեց 12 հոդու։ 10 հոդին կուլ տվին տասնել լուր հոգու (ծիծառ)։

Բնկերներն, ըստ յերեսութին, մոռացել են, վոր նույնիսկ կուսակցության անկեցալ գության շրջանում, յերբ կոռպտացիան բղխում եր անհրաժեշտությունից, այն դրվում եր մի ամբողջ շարք սահմանափակող պայմանների մեջ։

Այդ դեռ քիչ ե, վոր պլենումներն են կոռպտացիայի յենթարկում։ կան կազմակերպություններ, վորոնք գնում են ավելի հեռուն։ Որինակ, Կիբովյան մարզի Տուժինսկի շրջկոմի պլենումը վորոշում եր կայացրել, վորի համաձայն բյուրոյի նոր կազմին հանձնարկում եր կոռպտացիա կատարել շրջկոմի անդամների կազմի մեջ։ Պլենումի այդ վորոշան հիման վրա շրջկոմի բյուրոն կոռպտացիայի յեր յենթարկել 7 հոգու և կոռպտացիան պլենումում հաստատել միայն 5 ամսից հետո, ըստվորում շրջկոմի այդ 7 անդամների հաստատման ժամանակ ներկա յեն յեղել շբթ-

կոմի պլենումի՝ որինական կերպով ընտրված միայն 6  
անդամ:

Ընտրականությունը խախտելու և այն կոռակտա-  
ցիայով փոխարինելու պրակտիկան ընդդրկել և չս-  
փազանց շատ թվով դեկավար կազմակերպություններ,  
իսկ վերջիններիս թողարկության պայմաններում նույն  
ճանապարհով դնացել են նաև սկզբնական կուսակ-  
ցական կազմակերպությունները։ Մեզ մոտ, լենին-  
գրադում, որինակ, Կանոներսկի գործարանի կուսակ-  
ցական կոմիտեն ընտրված և յեղել մինչև ԽVII համա-  
գումարը և 3 տարվա ընթացքում, այն ժամանակ,  
յերբ կուսակցական կոմիտեյի կազմը 7 հոդի յեր,  
կոռակտացիայի յեն յենթարկվել 22 հոդի, այսինքն՝  
կուսակցական կոմիտեն յերեք անդամ փոխել և իր  
կազմն առանց նորմալ ընտրությունների։

Կիրովյան գործարանում ընտրվածների կազմից  
մնացել են 3 հոդի, իսկ մնացածները բոլորը կոռա-  
կտացիայի յենթարկվածներ են։

Ժդանովի անվան գործարանի կուսակցական կո-  
միտեյում տարբեր ժամանակներում կոռակտացիայի  
յեն յենթարկվել 31 մարդ։

Այն կապակցությամբ, վոր ընտրությունների  
ժամկետների խախտումը և կոռակտացիան մեզ մոտ  
տարածված յերկույթ են դարձել, մի շարք կազմա-  
կերպություններում մոռացել են, թե ում են ընտրած  
յեղել։ Հենց դրա հիման վրա կարող ելին ստացվել  
այնպիսի փաստեր, վորոնց մասին դուք յերեկ կար-  
դացիք «Պրալդա»-յում, յերբ Ոլեյնիկովին, և նրա մասին հիշել են յերկու  
տարուց հետո, յերբ նա անհանդստացած այն բանից,

չոր իրեն վոչ վոք չի հիշում և չի կանչում, ինքն և  
ներկայացել մարզային կոմիտե։

Լենինգրադի մարզում, Բորովիչիում՝ «Կրասնի  
Կերամիկ» գործարանի կուսակազմակերպության մեջ,  
1937 թվականի հունվարի 4-ին դրված և յեղել կու-  
սակցական կոմիտեյի լրացուցիչ ընտրությունների  
հարցը։ Կարգում եմ ըստ արձանագրության։ «Կու-  
սակցական կոմիտեյի քարտուղար ընկ. Ռոգինովին  
ինֆորմացիա յետալիս կուսկոմիտեյի կազմը «Պոկու-  
մենտակ կերպով ճշտելու» վերաբերյալ կուսակցական  
ժողովի կողմէից իլեն արված հանձնարարությունը  
կատարելու մասին։ Նա հայտնեց, վոր կուսկոմիտե-  
յում յեղած փաստաթղթերի համաձայն, կուսկոմիտե-  
յի անդամներ են հանդիսանում Սվիդերսկին, Կուլ-  
նեցովան, Դանիլովը և Ռոգինովը։ Կուսկոմիտեյի  
ցուցակի մեջ կան, բայց փաստաթղթերով չեն հաս-  
տառավում Գրոմովան, Սոկոլովը, Կալինինը։ Վորոշե-  
ցին պարզություն մտցնել կուսկոմիտեյի կազմի մեջ  
և լրացուցիչ կերպով նրա կազմում ընտրել աշխատու-  
նակ ընկերների։

Ի միջի այլոց, հենց ժողովում կուսակցական  
կոմիտեյի յերկու անդամ, վորոնց համարում ելին ս-  
ընականորեն ընտրված, կարականապես հրաժարվում  
ելին այդ բանից, նրանց ջերմորեն համոզում ելին։  
Կուսկոմիտեյի քարտուղարը հետո պատմում եր  
կուսկոմիտեյի անդամներին «Վորոնելու» վերաբերյալ  
իրեն արված հանձնարարությունը կատարելու դժվա-  
րությունների մասին։ «Ռ'Փ, վնառեցի, վնառեցի  
կուսկոմիտեյի անդամներին, հազիվ գտա նրանց։

Այսպես և զրությունը կուսակցական որդանների  
ընտրականության վերաբերյալ մեր կուսակցության

որենքների կոպիտ խախտման և ընտրականությունը  
կոսպացիայի պրակտիկայով փոխարինելու ասովաբե-  
զում, մի պրակտիկա, վորն անհամատեղելի յէ մեր  
կուսակցության վողու և տրագիաների հետ:

## ՆԵՐԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱՆԽԱԽՏ ՈՐԵՆՔՆ Ե

Իրենց՝ ընտրությունների պրակտիկայի մտունը՝  
ընտրությունների մեխանիկան մեզ մոտ հաճախ այն-  
պես և կառուցված, վոր կուսակցության անդամները  
զրկված են լինում թեկնածությունների վերաբերյալ  
աղատ կերպով արտահայտվելու, անընդունելի թեկ-  
նածուներին քննադատելու և մերժելու իրավունքն ող-  
ատորներու հասրավորությունից: Ընտրությունների  
կաղմակերպումն ուղղված ե վոչ թե այն բանին, վոր  
ապահովիլի յուրաքանչյուր թեկնածությունը կուսակ-  
ցական մասսայի կողմից ստուգելու խնկական հանրա-  
վորությունը, այլ այն բանին, վոր վորքան հնարանիոր  
և շուտ, ավելի հասարակ ձեռվ անցկացվեն ընտրու-  
թյունները և ազատվեն այս կամ այն թեկնածության  
վերաբերյալ կուսակցական մասսաների ձանձրացուցիչ  
քննադատությունից: Մեղ մոտ սովորաբար դրու-  
թյունն այսպես ե լինում. կուսակցական կոմիտեյի  
քարտուղարը կոնֆերենցիայից միքանի որ առաջ իր  
ծոցատերի անկյունում ինչ-վոր մի տեղ թեկնածու-  
ների նախնական նշում և կատարում: Այնուհետեւ հրա-  
միրվում ե քարտուղարների խորհրդակցություն, վոր-

տեղ ձեւակերպվում է ցուցակը: Այնուհետեւ թեկնա-  
ծուների քննարկումն անցնում է «սինի կոնվերսի»,  
ինչպես մեղ մոտ անվանում են սենյորեն-կոնվենտը, և  
պատվիրակությունների խորհրդակցությանը: Թեկնա-  
ծությունների քննարկությունն այսպիսով սովորվում  
է զանազան փակ նախնական խորհրդակցություննե-  
րում «ընտանելան» կարդով, առանց առանձին «դլուա-  
ցալանքի»: Միանդամայն պարզ ե, վոր յեթե քար-  
տուղարների և պատվիրակությունների խորհրդակ-  
ցությունները հարցը կանխորոշել են, ապա չափից  
դուրս դժվար ե մի վորեն թեկնածություն մերժել  
ընդհանուր ժողովում կամ կոնֆերենցիայում: Կոն-  
ֆերենցիաներում թեկնածությունների շուրջը մտքերի  
փոխանակություն, փրկե կանոն, չի բացվում, քվե-  
արկությունը կատարվում է ցուցակով և վոչ անհա-  
տապես, և այդպիսով ընտրական պրոցեդուրան վե-  
րածվում է հասարակ ձեւականության: Կոնֆերենցիա-  
ներում արագության կուրս և վերցվում: Նախազահ  
նուեցնում են այնպիսի մարդու, վորը թեկերը վեր քա-  
շած՝ ընտրությունները ցուցակով «պատեցնում ե» մի  
քանի ըռպեկյում: Այնուհետեւ ստացվում ե նաև լիակատար  
միակամության ցուցադրում և առարկությունների  
համար ել ըստ եյության հնարավորություն չկա:   
Փոխանակ մարդկանց հնարավորություն տալու հենց  
կոնֆերենցիայում մասնակցելու քննարկմանը, հնա-  
րավորություն բաց անելու առաջադրված թեկնածու-  
թյունների լայն քննադատության և մերժման համար,  
ամբողջ գործը հանդեցվում է նեղ կաղմակերպական  
«տեխնիկայի», վորը հետապնդում է մեկ նախակ՝  
ցանկապատվել կուսակցական մասսաների քննադա-  
տությունից:

Այսպիսի պրակտիկան անհամառեղելի յեւ մեր կուսակցության վողու և արադիցիաների հետ և այն ինդիբների հետ, վորոնք կանոնած են մեր առջև։ Դա կուսակցության անդամի որինական իրավունքների քողարկված խախտումն և հանդիսանում, կուսակցական գեմոկրատիայի խախտում։

Կոուրուսացիայի մասին յես կցանկանայի անել ևս մեկ դիտողություն։ Յես ցանուում եմ մասնանշել մեր կուսակցության կենտրոնական կոմիտեյի փորձը։ Յեթէ տեղական աշխատողներն ավելի լավ սովորեցին կենտրոնական կոմիտեյից, մենք թույլ չենք տա կոուստացիայի այդպիսի սանձարձակություն, վորուտեղի յեւ ունեցել մի շարք կազմակերպություններում։ Զե՞ վոր կենտրոնական կոմիտեն իր գոյության ընթացքում վոչ մի անդամի ու թեկնածուի կոուստացիայի չի յենթարկել կենտրոմի կազմի մեջ։ Կենտրոնական կոմիտեյում այդպիսի պրակտիկա դոյություն չունի։

Ներկուսակցական գեմոկրատիզմի հիմունքների պահպանման գործում մյուս լուրջ թերությունը կուսակցական զեկավարների, կուսակցական կոմիտեների քարտուղարների լայնորեն տարածված նշանակման սիստեմն է։ Անհրաժեշտ և այդ պրակտիկան փոխել այն ուղղությամբ, վոր յեթէ կուսակցական կոմիտեն նկատի ունի փոփոխություն կատարել սուրագառ կազմակերպության կուսակցական զեկավարության կազմի մեջ, ապա նա թեկնածությունը նշելով, պարագվոր և նախքան այն վերադաս կուսակցության ինտուսացիայի հաստատությանը ներկայացնելը քննության զնել այն կազմակերպության առաջ, ուր նախառոշում և ուղարկել քարտուղարին, և դրանից հետո

միտքն զիմել վերագաս կազմակերպությունը՝ սանեցիոն սահմանալու համար։

Մենք կուսակցական կոմիտեների քիչ քարտուղարներ չունենք, վորոնք ընտրված չեն կուսակցական կոմիտեյի կազմի մեջ։ Յես այսեղ կարող եյի հիշտակել միքանի տասնյակ մարզկանց անուններ, վորոնք, կուսակցությունների քարտուղարներ լինելով, ընտըրված չեն կուսակցությունների կազմի մեջ։ Ստանում են նշանակումը, ստանում են ուղեղիրը, դալիս են և միանդամից նստում աշխատանքի, իսկ հին քարտուղարն, իրեւ կանոն, հաշիվ չի տալիս։ Մեղ մոտ ուժեղ կերպով զարգացած են «ինքնահաշվեավությունները», բայց կուսակցական կոմիտեների հաշվեավությունը կուսակցական մասսաների առջև զարգացած և բացահայտուն անբավարար կերպով։

Ինքնահաշվեավությունների վերաբերյալ։ Մյն ձեւվով, ինչպես մեղ մոտ մեղի յեն ունենում կոմանիթաների ինքնահաշվեավությունները, գրանք բյուրոկրատական ծաղր են հանդիսանում կուսակցության անդամների նկատմամբ։ Մեծ մասամբ ինքնահաշվեավությունները կապված են կոմունիտի անձնական կյանքի մեջ, ընտանեկան կյանքի մեջ պեղումներ կատարելու հետ, բայց ընալ վոչ մասսաների մեջ նրա ավանդարդային դերն ու աշխատանքը հայտնաբերելու հետ։ Ինչի՞ յեն հանդում ինքնահաշվեավությունները։ Այս մասին վկայում են վորոշ փաստեր։ Որենրուրդի մարդի Մատուեյելվայն ըրջանի Ձերժինսկու անվան կոլտնտեսության կուսակցական կազմակերպությունը լուս և կոմունիտ Սիդորովի ինքնահաշվեավությունը. «Թերթեր չի կարգում և դուրս չի դրում։ Կնօջ գետ, վոչինչ, լավ և յոլա դնում, յերեխաների հետ

նույնպես... Հաշվի առնել, վոր Սիղորովը բավարար չափով չի դաստիարակում իր ընտանիքին»: Այս որպեսի ինքնահաշվետվություն ե:

Նույն այդ կազմակերպությունը կուսակցության անդամ Մազինի ինքնահաշվետվության առթիվ, վորը ծեծելիս և լինում իր կողմը, արձանագրել է. «Այլև ընտանեկան հիմարություններ թույլ չտալ: Ամենահակարծ ժամկետում կանոնավորել ընտանեկան հարաբերությունները»: (Ընդհանուր ծիծաղ):

Դադախստանում, Ամոսովի անվան խորհտնակության մեջ լսում են կոմունիստ Մալիբովի ինքնահաշվետվությունը: Ընդունվում է կարճ ու կտրուկ մի վորոշում. «Լուցին—Մալիբովի ինքնահաշվետվությունը: Վորոչեցին—Մալիբովին ձերբակալել»: (Ընդհանուր ծիծաղ):

Զայներ—ինչի՞ համար:

Ժդանով—Այսուեղ ուրիշ հարց և ծագում. կուսակցական կազմակերպությունն իրավունք ունի՞ արդյոք ձերբակալելու իր անդամներին. մարդը հաշիվ տալով՝ իր գլուխն ոյի՞ն և բերել:

Շատ կուսակցական կազմակերպություններում նվազեցված է պլենումների, վորպես կոլեկտուլ զեկության որգանների, գերը: Պլենումի նիստեր դումարվում են հազվադեպ, ամենի շատ հանդիսավոր կամ ընդհանուր հարցեր քննարկելու համար. տեղական աշխատանքի հարցեր հաղվադեպ են դրվում: Ընտրությունների վերաբերյալ հարցերը և այլ հարցեր, ինչպես յետ արդեն ասացի, քննարկվում և վճռվում են անհրաժեշտ քվորումի բացակայությամբ:

Դորիու մարդի Վաչսկի աշխատմը 1936 թվականի ընթացքում չի հրավիրել վոչ մի պլենում: Դնեալու-

ողեարովսկի մարդի Վեսելովսկի շրջանում 10 ամսվա ընթացքում վոչ մի պլենում չի դումարվել: Զելինսկի հրձանում, Թաթարիայում և Թաթարիայի մի շարք այլ շրջկումներում 1936 թվականին 7—8 ամսվա ընթացքում չի գումարվել վոչ մի պլենում: Ել ո՞ւր և ոյսուեզ կուկուսիվ զեկավարությունը:

Մեր ընտրական կազմակերպությունների գերի նվազեցման դժով նույնպիսի թերություններ կան նաև ակզնական կուսակցական կազմակերպություններում:

Բանաձեի նախագծի մեջ ցուցում կա այն մասին, վոր մենք պետք ե ապահովենք այնպիսի դրություն, վորի ժամանակ սկզբնական կուսակզմակերպություններում ապահովված լինի կուսակոմիտեներն ընդհանուր զործարանային ժողովներում ընտրելու կարգի խիստ պահպանումը, թույլ չտալով, վոր ընդհանուր ժողովները փոխարինվեն կոնֆերենցիաներով: Այսահետեւ հենց մատնանշվում է մի շաբթ սկզբնական կուսակզմակերպություններում գոյություն ունեցող այն պլրակտիկան լիկվիդացիայի յենթարկելու անհրաժեշտությունը, յերբ փաստորեն վերացվում են ընդհանուր ժողովները և վերջիններու հարցին ժողովներով ու կոնֆերենցիաներով:

Պատկերացրեք ձեզ դրությունը խոչոր գործարանում, վորտեղ կան կուսակցության 1000—1500 անդամ: Փոխանակ կուսակցական կոմիտեյի ընտրությունների համար հարավիրելու ընդհանուր գործարանային կուսակցական ժողով, կուսակցության յերեք անդամից մեկ պատզամալորի նորմայով հասկիրում են գործարանային կոնֆերենցիա, դրանով իսկ ընդհանուր գործարանային կուսակցական ժողովը փոխարինում կոնֆերենցիայով և ընտրություններ կա-

առարտամ. այսինքն՝ ըստ եյության, յերեք հաղուց յերկուսին զրկում են ընտրություններին մասնակցելու հարավորությունից: Թույլատրելի՞ յէ արդյոք արդ: Պարզ ե, վոր վոչ մի դեպքում թույլատրելի չե:

Ընդհանուր ժողովների դերը նվազեցված ե: Մի շարք կազմակերպություններում ընդհանուր կուսակցական ժողովները գումարվում են հաղվադեպ, տեղական կուսակցական կյանքի հարցերով քիչ են դժուգում:

Ներկուսակցական դեմոկրատիզմի հիմունքների խախտումներն անդրադառնում են նաև կուսակցական ժողովների նախապատրաստման վրա, յերբ կուսակցության անդամները նախապես չղիտեն, թե ինչ հարցեր են քննարկվելու:

Կուսակցական ժողովների բանաձևերը պատրաստելու մասին: Հաճախ կուսակցական ժողովներում այս կամ այն հարցի վերաբերյալ բանաձևը մտցվում ե վաղորոք կամ խորպիւմ այդ դրձի վարպետների կողմից հենց ժողովի ժամանակ, առանց հաջի առնելու, թե ինչի մասին ե խոռվում մտքերի փոխանակության ընթացքում: Մեզ մոտ ընդունված ե հետեւյալ ձևակերպումը. մշակել վորոշման նախադիմ «մտքերի փոխանակության հիման վրա», իսկ դորժականում այդ «մտքերի փոխանակությունը» հենց հաջի չի առնվում:

Դա կուսակցության անդամների սրինական տիրական իրավունքները մեծապույն չափով չհարգելու արտահայտություն ե:

Մեզ մոտ մարդիկ անկարգ ու անբարեխիղն կերպով անփութորեն են վերաբերյում կուսակցական փաստաթղթերին ու վորոշումներին: Մենք բոլոր են

պետք ե կուսակցական փաստաթղթերին վերաբերպելու դաս վերցնենք կենտրոնական կոմիտեյից: Յեթև այժմ մենք բարձրացրել ենք կուսակցական տամսի դերը և հարգանքը դեպի այն, առա այդ չի կարելի առել մեր մյուս շատ կուսակցական փաստաթղթերի մասին: Ինչպես են կազմվում, կատարվում, պահպանվում նրանք: Անփույթ կերպով: Մենք պետք ե կենտրոնական կոմիտեյից սովորենք բացառիկ ճշգրտություն, հոգատարություն և ճշտապահություն ցուցաբերել յուրաքանչյուր կուսակցական փաստաթղթի նկատմամբ: Այդ տեսակետից մեզ մոտ տեղերում կադամակերպական շատ թափթփվածություն, անփութեթյուն կա:

Որինակ՝ բնավլ սակավ կարենոր չե այն հարցը, թե կուսակցական կոմիտեյի բյուրոյի անդամները նիստում քննարկելու համար նյութեր ստացե՞լ են արգյուք, թե վոչ, դրանք մի որ առաջ են ստացել, թե դրանք բաժանվում են հենց նիստում: Դա ևս ներկուսակցական դեմոկրատիան ապահովելու հարց ե:

Այդ հարցերը մանրունք են թվում, բայց վերջին հաշվով նրանք վնասում են մեզ, քանի վոր խանդարում են ակտիվի աճմանը և նրա համար դժվարացնում են կուսակցության կյանքին ակտիվ ու ինքնուրույն կերպով մասնակցելու հնարավորությունը: Այդ կապակցությամբ զարգանում են թե՛ հրաժանառարություն անելլ, թե՛ ամեն տեսակ այլ գործեր:

Ես կուղեյի բերել կոլեկտիվ զեկավարման ռեզունքները խախտելու որինակներից մեկն ես: Խոռը վերաբերյում ե այսպես կոչված «յեռանկյունիներին»: Կուսակմի քարտուղարից, ձեռնարկության կամ հիմնարկի ղեկավարից և տեղական պրոֆկազմակերպու-

թյան նախաղահից բազկացած «յեռանկյունու» անվան  
տակ մեղ մոտ մի շարք կազմակերպություններում,  
նորմալ ընտրական որդաններից բացի (կուսկոմն ու  
դործարանային կոմիտեն), գոյություն ունի պաշտո-  
նապես ու կանոնավոր կերպով գործող, վոչ մի կու-  
սկական ու խորհրդային որենքով չնախառեալած  
մի յուրահատուկ կազմակերպություն։ Նա հավաք-  
վում է, վորոշումներ և կայացնում, դիրեկտիվներ և  
ուղիս ի կատարումն և այլն։ Կուեկտիվ զեկավարման  
տեսակետից, կուսակցական, տնտեսական ու պրոֆ-  
ֆիւթենական կազմակերպությունների ճիշտ փոխհա-  
րաբերությունների տեսակետից, յեռանկյունին ներ-  
կայացնում և միանդամայն անթույլատրելի ձև։ Դա  
ընտանեկանություն և, խոսքը մեկ անել և, վորպեսզի  
ավելի դժվար լինի քննադատել։ Յեկ յեթե այդ յե-  
րեքը համաձայնության են հանդել, փորձի՛ր, դնա՛,  
քննադատի՛ր նրանց։ Այդ դիմադրուրկ և անում պրոֆ-  
ֆիւթենական և կուսակցական կազմակերպությունը,  
պնաթափ և անում տնտեսական զեկավարության թե-  
րաւթյունների դեմ մզկող պայքարում, իսկ մյուս  
կոզմից՝ զինաթափ և անում հենց տնտեսավարին ի-  
րեն, վորովհետեւ յեռանկյունին ներկայացնում և կա-  
ռավարման ինչ-վոր կոլեգիալ որդանի նման մի բան,  
մինչդեռ մեր տնտեսական զեկավարությունը կառուց-  
ված և բոլորովին այլ կերպ։

Եեռանկյունիները ներկայացնում են կուեկտիվ  
զեկավարության պարողիան, ծաղրանկարը, սուրբո-  
պատը։ Ինչի՞ յե հանդում այլ։ Ահա մեղ մոտ, լե-  
նինդրապում, կալինինի անվան դործարանում, կոմու-  
նիստին վտարեցին կուսակցությունից այն բանի հա-  
մար, վոր նա քննադատել եր ստախանովյան շարժման

միաւ զեկավարումը գործարանային վարչության կող-  
մից, այն բանի համար, վոր նա մատնացույց եր արել  
զեկավարման թերությունները։ Նրան դասեցին աղմը-  
կարաբների շարքը։ Մենք վերականգնեցինք կուսակ-  
ցության անդամի նրա իրավունքները, սկամժեցինք  
նրանց, ովքեր ամենաապորինի ու կոպիտ ձեռով եյին  
վարդել նրա հետ։ Բայց այդ փաստն ինքնըստինքյան  
հնարավոր դարձալ չնորհիվ յեռանկյունու գոյու-  
թյան, վորը նախապես համաձայնության եր հանգել։  
Դիրեկտորն այնտեղ զալիս ու ասում ե՝ վրդութեցու-  
ցի՛չ գործ, հայհոյում են դիրեկցիային։ Նրան ձայ-  
նակցում են քարտուղարը և գործարկոմի նախապահը։  
Սյրպիսով ստացվում ե քննադատության ճնշում, և  
այն ժամանակ արգեն այդպիսի գործարանում բան-  
վորների համար զժվար և ճշմարտության համեմ։

Ես կարծում եմ, վոր ժամանակն և յեռանկյու-  
նիները վերացնելու հարցը դնել։

Վա՞ր և դեմոկրատական ցենտրալիզմի հիմունք-  
ները խախտելու վերոհիշյալ բոլոր փաստերի վնասը։  
Վնասն այն է, վոր նմանորինակ պրակտիկան ար-  
գելակում և կուսակցության անդամների ակտիվու-  
թյան ու ինքնադործունեյության աճումը, թուլաց-  
նում և տեր լինելու զլացմունքը կուսակցության ան-  
դամների մեջ, խանդարում և կուսակցության անդամ-  
ների զաղափարային ու քաղաքական աճմանը, դրկում  
և կուսակցության անդամներին կուսորդանների գոր-  
ծունեյությանը վերահսկելու իրենց ուլինական իրա-  
վունքներից և դրանով իսկ խախտում և զեկավարնե-  
րի ու կուսակցական մասսաների ճիշտ փոխհարաբե-  
րությունները, թուլացնում և կուսակցությունը՝ նրա  
առջև ծառացած ինդիրների հանգել։

ՎԵՐԱՑՆԵԼ ԱՅՆ ԱՄԵԿԸ, ԻՆՉ ՎՈՐ ԽԱՆԳԱՐՈՒՄ Ե  
ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԱԿՏԻՎԻ ԱՃՄԱՆԸ

Բոլորի համար պարզ է, թե մենք ինչպիսի հսկայական կալվար պետք ե ունենանք, վորակեսվի հաջողաբար լուծենք այն խնդիրները, վորոնք թելտդրվում են սոցիալստական շինարարության զարգացմամբ՝ բոլոր ասպարեզներում, նոր Սահմանդրության կիրառմամբ, կոմունիզմի համար մեր մղելիք հետադա պայքարով։ Նվիրված ու անձնութաց վորքն ընկերներ են պետք մեղ թե՛ կուսակցության մեջ, թե՛ նրա սահմաններից գուրս՝ անկուսակցականների մեջ։

Մենք մեր կուսակցական պրակտիկայից պետք ե վերացնենք այն ամենը, ինչ վոր արգելակում է, ինչ վոր խանդարում է ակտիվի ամժանը, նրա ինքնազործունելության զարգացմանը և նրա դերի բարձրացմանը կուսակցական կյանքի զեկավարման դրում, կուսակցական քաղաքականության բոլոր հարցերի քննարկման մեջ, ինչպես այդ բիում և ներկուսակցական գեմոկրատիայի հիմունքներից։

Էնկեր Ստալինը մեղ շարունակ սովորեցնում է, վոր կուսակցական ակտիվը քաղաքական հատուկ նշանակություն ունի մեր կուսակցության կյանքում։ Նու մեր կուսակցության վորոշումների կենսավործողն է։ Եւրբ կուսակցական վորոշումն ընդունված է, նրա ճակաապիրը դանվում է ակտիվի ձեռքում։ Կուսակցական ակտիվը հանդիսանում է կուսակցության հոսարտական կարծիքի արտահայտչը։

Հենց այն պատճառով, վոր մեր կուսակցությունը կարողացավ ակտիվի լայն խավերին կոփել ու պառ-

տիաբակել լենինի—Ստալինի վոգով, մենք հաջողությամբ լուծեցինք սոցիալստական շինարարության արմատական խնդիրները, ունենք այդպիսի վեթիարի, առասպելական հաղթանակներ։

Հասկապես այդ կապակցությամբ եր, վոր ընկեր Ստալինի նախաձեռնությամբ ընդունվեց կենտկոմի հայանի վորոշումը՝ Համկ(բ)կ կենտկոմի վորոշումները քննարկելու համար կուսակցական ակտիվների ժողովներ գումարելու մասին։

Այդ իսկ պատճառով մենք պետք ե վերացնենք մեր ճանապարհից այն ամենը, ինչ վոր խանդարում է մեր տկտիվի կաղերերի ընդարձակմանը, նրա դադարացույն-քաղաքական աճմանը, նրա բոլցեիկյան կոփածությանը, նրա կազմակերպական ամրացմանը։ Այն խողիները, վոր պետք ե վճռենք մենք թե՛ սոցիալստական շինարարության ասպարեզում, թե՛ առաջիկա նոր դեմոկրատական ընտրությունների կուսակցությամբ, եւրթի յեն դնում յուրաքանչյուր կոմունիստի ակտիվացման կարեռագույն հարցը։

Մեր ամբողջ յերկու միլիոնանոց կուսակցական մասնակիություն պետք ե լիովին ակտիվացմի, յուրաքանչյուր կոմունիստ պետք ե լինի ակտիվ կազմակերպիչ, կռւսակցության գործի առիտատոր ու պրոպագանիզմուու։ Այդ տեսանկյունով պետք ե վերակառուցվի մեր կազմակերպական, ազիտացիոն ու պրոպագանիֆիստական աշխատանքը։

Մի գիտողություն պրոպագանիֆիստական աշխատանքի մասին։ Մեր պրոպագանիֆիստական աշխատանքի հիմնական թերությունը, վորը քանից մատնացույց և արել կենտկոմը, այն ե, վոր պրոպագանիֆիստական աշխատանքը հաճախ կատարվում է սիս-

լաստիկ կերպով, կորված և կուսակցության ընթացիկ և կենսական մարտական խնդիրներից: Մեր պրոպա-  
դանդան պետք է գրված լինի այնպիսի հիմքի վրա,  
վրապեսպի յուրաքանչյուր պրոպադանդիստական խըմ-  
բակի, յուրաքանչյուր ռարոցի խնդիրը լինի՝ կամա-  
նիստներին գաստիարակել այնպես, վոր կուսակցու-  
թյան անդամների գիտելիքների լրացումն ու նրանց  
կատարելագործումը մարքսիզմ-լենինիզմի գիտության  
ընազավառում հանդիսանա վոչ թե ինքնանպատակ,  
այլ կուսակցության զործի ակտիվ պրոպադանդիստ-  
ներ գաստիարակելու միջոց: Ահա թե ինչը պետք է  
աչքի առաջ ունենալ մեր պրոպադանդիստական աշ-  
խատանքում, վրապես նրա կարևորագույն սկզբանք-  
ներից մեկը:

Առաջ վերացնելու այն խոշոր թերությունները,  
վոր ունենք մենք մեր ներկուսակցական պրակար-  
կայում և առաջին հերթին ներկուսակցական դեմո-  
կրատիան ու ընտրականությունը խախտելու գծով, չե-  
կարելի լուծել կուսակցության նոր խնդիրները, վո-  
րոնք կապված են դեմոկրատական ընտրությունների  
հետ, և կուսակցական կազմակերպությունները կարող  
են անձարակ գտնվել այդ խնդիրների դեմ-հանդիման:  
Յեթ յեթե մենք ուզում ենք ընտրությունները կատա-  
րել նոր ընտրական սփառեմով, այնպես, ինչպես պա-  
հանջում և կուսակցությունը, այնպես, ինչպես պա-  
հանջում և Սահմանադրությունը, յեթե մենք ուզում  
ենք, վոր մեր խորհրդային ու կուսակցական աշխա-  
տողները հարցեն մեր որենքները, և մասսան՝ խոր-  
հըրդային Սահմանադրությունը, ապա մենք պետք է  
ապահովենք կուսակցական աշխատանքի վերակա-  
ռուցումը՝ մեր կուսակցության կանոնադրությամբ

նախատեսված ներկուսակցական դեմոկրատիայի հի-  
մունքների անդայման ու լրիվ իրականացման հիման-  
վրա:

\* \*

Յելելով գրանից, մեղ անհրաժեշտ և կիրտակ  
հետեւյալ միջոցառումները.

Առաջին՝ անպայման վերացնել կոռպուտացիայի  
պրակտիկան և կանոնադրությանը համապատասխան  
վերականգնել կուսակցմակերպությունների ղեկավար  
որդանների ընտրականությունը:

Յերկրորդ՝ արգել կուսորդանների ընտրություն-  
ների ժամանակ ըստ ցուցակների քվեարկելը և բայ-  
քվեարկությունից անցնել գաղտնի ու անհատականո-  
րեն կատարվող քվեարկության: Ընդ վորում պետք է  
տպահովված լինի առաջազդրված թեկնածությունները  
մերթելու անսահմանափակ իրավունք կուսակցության  
անդամների համար և այդ թեկնածությունների քննո-  
դատության անսահմանափակ իրավունք:

Այդ կապակցությամբ անհրաժեշտ ե՝ նկատի ու-  
նենալով ընտրականության լուրջ խախտումները մեր  
կառակցական կազմակերպություններում, կատարել  
կուսակցական որդանների ընտրությունները՝ սկսած  
սկզբնական կազմակերպությունների կուսկոմիտենե-  
րից և վերջացրած յերկրային, մարզային կոմիտենե-  
րով ու ազգային կոմիտեների կենտրոններով, անդ-  
կացնելով դրանք առաջիկա յերկու ամսում և ավար-  
տելով ընտրությունները մինչև մայիսի վերջերը: Ան-  
հրաժեշտ և այսուհետեւ խստիվ պահպանել կուսորդան-  
ների ընտրությունների ժամկետները կանոնադրության

Համաձայն — սկզբնական կազմակերպություններում՝  
տարին մի անգամ, շրջանային ու քաղաքային կազմա-  
կերպություններում՝ տարին մի անգամ, յերկրային,  
մարդային և հանրապետական կազմակերպություննե-  
րում՝ մեկ և կես տարին մի անգամ :

Ինչ վերաբերում է կուսակցական ժողովներին, ա-  
պա անհրաժեշտ և կորականորեն դատավարութել ու  
արգելել ընդհանուր կուսակցական ժողովները ցեխա-  
յին ժողովներով կամ կոնֆերենցիաներով փոխարինե-  
լու պրակտիկան և թույլ չտալ յերկաստիճան ընտրու-  
թյուններ կուսակցական կազմակերպություններում,  
այլ մացնել կուսակցական սառըին որդաններն անմի-  
ջականորեն ընդհանուր ժողովներում ընտրելու պրակ-  
տիկան :

Ահա այս առաջարկները, վոր յես կուզեյի ձևա-  
կերպել այսակ:

ԵՆԿԵՐ ԺԴԱՆՈՎԻ ՏԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔԸ  
ՀԱՄ Կ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՊԼԵՆՈՒՄՈՒՄ

1937 թվականի փետրվարի 27-ին

Ընկերնե՛ր, մոքերի փոխանակության ընթացքում  
շոշափեց և դիսկուսիայի յենթարկվեց մյուս կազ-  
մակերպությունների, դիսավորակես խորհրդային  
կազմակերպությունների աշխատանքի վերակառուց-  
ման հարցը: Այսուղ խոսեցին և՛ պրոֆմիությունների  
մասին, և՛ կոմյերիտմիության մասին, և՛ մյուս մաս-  
սայական կազմակերպությունների մասին: Այդ չա-  
փազանց կարևոր դրծ և և, իհարկե, մենք պետք ե  
այդ կազմակերպությունները վերակառուցենք մինչև  
ընտրություններն այն աշխատանքի վորով, վոր մենք  
պետք ե կատարենք կուսակցական կազմակերպության  
մեջ:

Յե՛վ խորհրդային, և՛ ոլրովմիութենական, և՛  
կոմյերիտմական կազմակերպությունների վերակառուց-  
ման պայմանն և հանդիսանում՝ նախ և առաջ հենց  
կուսակցական կազմակերպության վերակառուցումը՝  
վորպես հիմնական դեկալար ուժի, վորպես մեր բո-

ւոր կաղմակերպությունների հիմնական դեկալաբ կո-  
ռեզի, ինչպես այդ գրի յև առնված մեր Սահմանա-  
դրության մեջ: Յես չեմ կարծում, վոր մենք պետք  
ե հրաժարվենք և արդեն այժմ աշխատանք չկատա-  
րենք մասսայական կաղմակերպությունների — պրոֆ-  
միությունների, խորհուրդների, կոմյերիտմիության  
և այլն—աշխատանքը վճռաբար բարելավելու ուղ-  
ղությամբ, բայց նրանց աշխատանքի իսկական վե-  
րակառուցումն, իհարկե, կապված ե այն բանի հետ,  
թե վո՞ր չափով կհաջողի վերակառուցվել կուսկադ-  
մակերպություններին—այդ ե ամեն բանի արմատը:

Այժմ կուսակցական կաղմակերպությունների ընտ-  
րականության խախտման, կոռապտացիայի տարածման  
և ներկուսակցական դեմոկրատիայի ու դեմոկրատա-  
կան ցենտրալիզմի հիմունքների մյուս խախտմաների  
մասին: Մտքերի վորանակությունից յերեսում ե, վոր  
բանը շատ հեռու յև գնացել, վոր անցյալ ժամանակա-  
շրջանի սովորույթներն ու մնացուկները դեռ ամուր  
նոտած են մեր աշխատողների գլխում, վորոնք տար-  
վել են մեր մեծ հաջողություններով: Այդ սովորույթ-  
ներն ու մնացուկներն, անտարակույս, կապված են  
վորոշ վոչ-մարքսիստական հայացքների հետ, վորոնք  
ընկեր Ստալինը խարազանել ե դեռ XIII կուսկոնֆե-  
րենցիայում, 1924 թվականին, և վորոնք յենում են  
այն բացարձակապես վոչ-մարքսիստական պատկե-  
րացումներից, թե իբր մեր կուսակցությունը հանդի-  
սանում ե «վոչ թե ինքնազործունյա որդանիզմ», վորն  
ապրում ե ինքնուրույն դաղափարային ու պրակարիկ  
կյանքով, այլ ստորին, միջին ու բարձրագույն հիմ-  
նարկների սիստեմի նման ինչ-վոր մի բան»:

Ընկեր Ստալինն այն ժամանակ մատնանշում եր,

վոր պայքարն այդպիսի հայացքների գեմ կուսակցու-  
թյան հերթական խնդիրն ե հանդիսանում: Ընկեր  
Ստալինի այդ ցուցումներն անհրաժեշտ ե հիշեցնել  
դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքների բյուրո-  
կրատիկ խեղաթյուրման փաստերի կապակցությամբ:

Կուսակցական կյանքից զեկավար աշխատողների  
վորոշ կորպածության մասին այստեղ խոսեցին մի  
շարք ընկերներ և առանձնապես համոզիչ կերպով խո-  
սից ընկեր Խատայելիչը:

Ընկեր Խատայելիչը Դնեպրոպետրովսկի կաղմա-  
կերպության փորձի հիման վրա ցույց տվեց, թե ինչ-  
պես տնտեսական ընթացիկ հարցերով տարվելը հասց-  
նում է կուսակցական աշխատանքի ճաշակը կորցնե-  
լուն, կուսակցական աշխատանքի թուլացմանը:  
Այդպիսի գրությունը տիպիկ ե: Պետք ե հիշեցնել,  
վոր մեղ ծանրաբեննելով տնտեսական մանր հարցե-  
րով՝ ի վնաս կուսակցական աշխատանքի, մենք մո-  
ռանում ենք, վոր կուսակցական աշխատանքը մեր փո-  
խորեն վոչ վոք չի կատարի: Կուսակցական աշխա-  
տանքի զեկավարությունը կուսաշխատողների գլուխ-  
վոր Փունկցիան ե, պատասխանատվություն այդ աշ-  
խատանքի վիճակի համար ամբողջապես և լիովին  
ընկնում ե նրանց վրա:

Ընկեր Կարակովի ճառը ցուցանիշ եր այն բանի,  
վոր կուսակցական աշխատանքը մի շարք կաղմակեր-  
պություններում խիստ լլորեն մոռացության և ար-  
ված: Ընկեր Կարակովը խոսեց ամեն ինչի մասին,  
ված: Ընկեր Կարակովը խոսեց ամեն ինչի մասին:  
Այս բոլորը չափազանց կարենոր և չափազանց  
եյական բաներ են, բայց յերբ ընկեր Մոլոտովը հարց

Դրեց ընկեր Կաբակովի առաջ, թե Աւրալում ինչպես և գոռատացիայի գրությունը, նա անցավ այդ հարցի կողքով։ Նշանակում ե՞ կուսակցական աշխատանքի հարցերը հիմնական չեն հանդիսանում ընկեր Կաբակովի համար։ Այդ ցույց ե տալիս, վոր կուսակցական աշխատանքի թերազնահատումը հաղթահարված չե, վոր այդ տեսակետից անհրաժեշտ բեկում գեռ ստեղծված չե և վոր պետք ե սկսել զեկավարներից։ Շըադարձը գեղի կուսակցական աշխատանքն ամբողջապես կախված ե կուսակցական կազմակերպությունների զեկավարության ըրջադարձից։

Մէքանի խոսք ընարությունների կարգի վերաբերյալ։ Այստեղ ընկերները խոսեցին այն մասին, վոր անհրաժեշտ ե ցուցումներ տալ, թե ի՞նչպես անցկացնել զաղունի քվեարկությունը։ Քվեատո՞ւի կլինի, թէ՞ դնդակներ կդուրեն։ Այդ չափազանց եյական հարց ե, բայց այժմ մեզ համար անհրաժեշտ ե ունենալ վոչ թե հրահանդ, այլ պետք ե իմանալ՝ հավանության արժանանո՞ւմ ե արդյոք ինքը՝ սկզբունքը։ Գաղտնի քվեարկության սկզբունքի դեմ այստեղ վոչ վոք չառարկեց, ընդհակառակը, ընկերներն ընդդում եյին դապանի քվեարկության բացառիկ կարևորությունը և եյական նշանակությունն ընտրությունների խելական ազատությունն ապահովելու համար։ Ինքը՝ ընտրությունների պրոցեսը, ըստ յերկութին, բաժանված կլինի յերկու փուլի։ Առաջին փուլն այն ե, յերբ տեղի յե ունենում թեկնածությունների միանդամայն բացայտ քննարկումը։ Յուրաքանչյուրն իրավունք ունի ընտրվող կուսակցական կոմիտեյի համար առաջարկելու և պաշտպանելու ամեն մի թեկնածություն։ Այդ առաջին փուլն ե։ Այնուհետև, քննարկված թեկ-

նածությունները քվեարկվում են փակ քվեարկության միջոցով։

Կարելի յե վորպես նմուշ և որինակ վեցշնել կենտկոմի ընտրությունը կուսակցական համագումարներում, վորտեղ ընտրությունները կատարվում են զաղունի քվեարկությամբ։ Յես կարծում եմ, վոր այդպրակտիկան կարող ե լիովին ու ամբողջությամբ ողտագործներ տեղական կուսակցական կազմակերպությունների կողմից։

Այժմ կոռպատացիայի վերաբերյալ։ Բնկերներից վոմանք մատնանշում են, թե կոռպատացիայի լայն կիրառումը կապված ե այն բանի հետ, վոր անհրաժեշտ ե լինում տեղափոխել քարտուղարներին ու մյուս պատասխանատու կուսակցական աշխատողներին և դրահետևանքով նբանց մտցնել այս կամ այն կուսակցակամ կոմիտեյի կազմի մեջ։ Յեթե մեզ մոտ կուսակցական կազմակերպությունների ընտրությունները տեղի ունենան ստույգ սահմանված ժամկետներին, ուստի գժվարություն չի առաջ դա այն բանից, վոր մարդ 2-3 ամիս մնա չընտրված։ Նա կկատարի քարտուղարի պարտականությունները, բայց կուսակցական կոմիտեյի անդամ չի լինի, իսկ առաջիկա կոնֆերենցիայում կարող ե ընտրվել կուսակցական կոմիտեյի մեջ։ Մեզ մոտ այժմ այնպես ե պատահում, վոր կուսակցական զեկավարը կուսակցական կոմիտեյի անդամ և դառնում այս կամ այն կուսակցական պոստն ստանալու հետ միաժամանակ։ Այդ բնակ պարտադիր չե։ Մինչև կոնֆերենցիան նա քարտուղարի պարտականությունները կարող ե կատարել առանց կուսակցական կոմիտեյի անդամ լինելու։

Հաջորդ դիտողությունը։ Մեզ մոտ կոռպատացիան

վորոշ չափով՝ կապված ե յեղել կաղըբերի հոռոնության, աշխատողների հաճախակի տեղափոխությունների հետ:

Հանդեմ յեկող ընկերներն այստեղ խոսում եյին կաղըբով «աղքատ» լինելու մասին, վորն, իբր թե, նրանց հարկադրում ե մշտապես վերախմբավորումներ և մարդկանց տեղափոխություններ կատարել: Նրանք մոռանում են, վոր նոր կաղըբերի առաջքաշման համար ռեզերվներ ու հնարավորություններ մենք բացառիկ կերպով շատ ունենք: Դուք տեսեք, թե մեզ մոտ ինչպես արագ են աճում կուսակցական և անկուսակցական մարդիկ, նայեցեք ստախանովականների, ասենք վոչ միայն ստախանովականների, աճմանը: Վերցրեք կարմիր բանակի հրամանատարների և արդյունաբերության աշխատողների կանանց շարժումը, հիշեցեք վերջերս տեղի ունեցած համամիութենական խորհրդակցությունները: Իրենց յելույթների պայծառության, հյութալիության, լիարժեքության խմասառվ, աղիտացիայի նոր ձեռների ու նոր մեթոդների ընտրության իմաստով, ճառերի թեմաների, բովանդակության ու ձեր հարստությամբ նրանցից շատերը, ազնիվ խոսք, կծալեն ու գրանը կդնեն մեր վորոշ յերդլյալ ու խունացած աղիտատորներին: Մեր շարջը կան անթիվ քանակությամբ մարդիկ, մարդիկ չափազանց շատ են, այնպիսի մարդիկ, վորոնք վաղուց արդեն սպասում են առաջքաշման, բայց մենք նրանց չենք տեսնում մեզ մոտ գեմոկրատիզմի պակասության հետևանքով, պակաս, վորը մեզ խանդարում է տեսնել նոր մարդկանց, և շատ մարդիկ մեզ մոտ ըմանում են, իսկ լճանալով և մոռացության տրվել՝ նրանք գժղոհների ռեզերվ են դառնում մեր կու-

սակցության ներսում: Այս տեսակետից, դադանիք քվեարկության անցնելը, մեր կուսակցական կազմուկերպությունների իսկական ընտրականության անցնելը, կողնի մեզ վեր հանելու կուսակցական կաղըբերի այն հակայական ռեզերվը, վոր մենք ունենք: Դեռ կենինը, այն ժամանակներում, յերբ մենք աշխատողների կաղըբեր իսկապես քիչ ունեինք, ասում եր, վոր հարկավոր և պատժել նրանց, ովքեր ասում են, թե մենք կաղըբեր քիչ ունենք:

Միքանի խոսք աղիտացիայի մասին: Այստեղ ընկերները ճիշտ եյին ասում, վոր մեր աղիտացիան դիմակորապես ընդուրկում ե առաջալոր բանվորներին, առանձին կոլտնտեսություններ: Նա բնավ չի ընդուրկում այն մարդկանց հակայական շերտերը, վորոնք պատրաստ են մեզ ողնելու, ամեն րոպե պատրաստ են արձագանքերու և լինելու մեր բարեկամները, լինելու վոչ-կուսակցական բոլցեիկներ: Յես այստեղ նկատի ունեմ ինտելիգենցիային, ծառայողներին, անային տնտեսուհիներին և վոչ միայն նրանց: Պետք ե ուղղակի ասել, վոր մենք աղիտացիոն աշխատանքով չենք ընդուրեկում նույնիսկ խոշոր ձեռնարկությունների բոլոր բանվորներին, իսկ գյուղում աշխատաւմ ենք կոլտնտեսությունների միայն մի մասում: Մենք ունենք կոլտնտեսություններ, վորտեղ շրջանային դեկավարները լինում են տարին 2—3 անդամ, իսկ կան շատ կոլտնտեսություններ, մեծ մասամբ թույլեն գրանումն և դիմավոր վտանգը—խուլ անկյուններ, վորոնց մասին խոսեց ընկեր Եյխեն, ուր վոչ վոք չի այցելում, վորովհետեւ նրանցից ձեռք են քաշել: Այդ բացարձակապես սխալ ե, պետք ե ուժեղ կերպով աշխատել հենց այն բանվորների, կոլտնտեսա-

կանների, ծառայողների և այլ աշխատողների մեջ,  
վորսնք դեռ բավարար չափով ընդուռկված չ'ն մեր  
քաղաքական աղղեցությամբ:

Մեր աղիտացիայի բովանդակությունը հաճախ  
ուղղակի և անկեղծորեն չի պատասխանում բանվոր-  
ների առաջադրած հարցերին: Մեր յուրաքանչյուր  
միջոցառման կազմակցությամբ մենք ստանում ենք  
մեծ թվով հարցեր ու արձագանքներ, կուսակցական  
կոմիտեներում կազմում են այդ հարցերի ցուցակներ,  
բայց հաճախ այդ հարցերին չեն պատասխանում, խու-  
սակում են գժվար հարցերին պատասխանելուց: Այդ  
ժիշտ չե, մեր աղիտացիան պետք է լինի ճշմարտացի,  
մեր աղիտացիան պետք է պատասխանի բանվորների  
բոլոր հարցերին և առանց ուշադրության, առանց  
պատասխանի չթողնի գրանք, վորովհետեւ յեթե մենք  
չպատասխանենք, ապա մեր փոխարեն վորեւ մեկը  
կպատասխանի, — «սուրբ տեղը դատարկ չի մնա»:

Եեվ, վերջապես, մեր աղիտկոլեկտիվների հար-  
շը, վորոնց աշխատանքը չափազանց մոռացության և  
տրված և յերեսի վրա յեւ թողնված: Նրանք նույնութեա-  
սպասարկում են գլխավորապես Փաբրիկա-դուրծարա-  
նային ձեռնարկություններին: Իսկ ինչ վերաբերում է  
այնպիսի աղիտատորներին, վորոնք աշխատեն բնակ-  
վարձկուպներում, ԲՇՈՒՀ-երում ու ԲՏՇՈՒՀ-ներում,  
ծառայողների, ինտելիգենցիայի մեջ, այս բանին մեր  
կուսկազմակերպությունները դեռ չեն հասել: Անհրա-  
ժեցու և ունենալ մարդկանց նաև այդպիսի կադրեր:  
Այսուղ մեր հնարավորությունները բացառիկ են:  
Ամեն ինչ մեր ձեռքումն է գտնվում — թե՛ ուսդիոն,  
թե՛ կիսոն, թե՛ թերթերը, թե՛ սատանան դիտե՛ աղի-  
տացիայի վորքա՞ն միջոցներ:

Մենք ողտադործում ենք արդյոք այդ միջոցնե-  
րը: Միանդամայն անբավարար չափով: Խնդիրն այն  
է, վոր մենք կանոնավորենք այդ աշխատանքը, և դա  
չափաղանց լուրջ դործ ե,

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԽՍՀՄ-Ի ԳԵՐԱԳՈՒՅՆ  
ԽՈՐՃՐԴԻ՝ ՆՈՐ ԸՆՏՐԱԿԱՆ ՍԻՍՏԵՄՈՎ  
ԿԱՏԱՐԵԼԻՔ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՅԵՎ  
ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Համ և (թ) Կ Կենտրոնի պլենումի բանաձեվն ընկեր  
Ժ.Դ.Ա.Ն.ՌՈՎ.Ի գեկուցման առքիվ՝  
ընդունված 1937 թ. փետրվարի 27-ին:

ԽՍՀ Միության նոր Սահմանադրությունը մտցնելը շրջադարձ ենշանակում յերկրի քաղաքական կյանքում։ Այդ շրջադարձի եյությունն են ընտրական սիստեմի հետագա դեմոկրատացումը՝ խորհուրդների վոչ լիովին հավասար ընտրությունները հավասարով, բազմաստիճանը՝ ուղղակիով, բայց՝ փակով փոխարինելու իմաստով։

Յեթե նոր Սահմանադրությունը մտցնելուց առաջ գոյություն ունելին ընտրական իրավունքի սահմանափակումներ պաշտամունքի սպասավորների, նախկին սպիտակեղվարդիականների, նախկին մարդկանց և հանրուգուտ աշխատանքով չղբաղվող անձերի համար, ապա նոր Սահմանադրությունը դեն ենեառում ընտրական իրավունքի ամեն մի սահմանափակում քաղաքացիների այդ կառեգորիաների համար, բնդիանուր դարձնելով պատգամավորների ընտրությունները։

Յեթե առաջ պատգամավորների ընտրու-

թյունները հավասար չեյին, քանի վոր դոյտւ-  
թյուն ունեյին ընտրությունների տարբեր նոր-  
մաններ քաղաքային և գյուղական ընակչության  
համար, ապա այժմ ընտրությունների հավասա-  
րությունը սահմանափակելու անհրաժեշտությու-  
նը վերացված ե, և բոլոր քաղաքացիներն իրա-  
վունք ունեն հավասար հիմունքներով մասնակ-  
ցելու ընտրություններին:

Յեթե առաջ Խորհրդային իշխանության մի-  
ջին ու բարձր որդանների ընտրությունները  
բազմաստիճան եյին, ապա այժմ, ըստ նոր Սահ-  
մանադրության, բոլոր խորհուրդների ընտրու-  
թյունները՝ սկսած գյուղականներից ու քաղաքա-  
յիններից մինչև Գերագույն Խորհուրդը, կատա-  
րելու յեն քաղաքացիներն անմիջականորեն ուղ-  
ղակի ընտրությունների միջոցով:

Յեթե առաջ խորհուրդների համար պատ-  
գամավորների ընտրությունները կատարվում եյին  
բաց քվեարկությամբ և ցուցակներով, ապա այժմ  
պատգամավորների ընտրությունների ժամանակ  
քվեարկությունը լինելու յե գաղտնի և վոչ թե  
ցուցակներով, այլ ըստ ընտրական շրջանների  
առաջարկվող առանձին թեկնածությունների:

Վերջապես, Սահմանադրությունը մացնում  
ե համաժողովրդական հարցում (ոեֆերենդում):

Ընտրական սիստեմի այդ փոփոխությունները նշանակում են խորհրդային որդանների  
54

նկատմամբ մասսաների ունեցած վերահսկողու-  
թյան ուժեղացումը և մասսաների առաջ խոր-  
հրդային որդանների ունեցած պատասխանա-  
տվության ուժեղացումը:

Գաղտնի քվեարկությամբ ընդհանուր, հա-  
վասար և ուղղակի ընտրական իրավունք մտցնե-  
լու հետևանքը կինի մասսաների քաղաքական  
ակտիվության հետագա ուժեղացումը, աշխա-  
տավորների նոր խավերի ներգրավումը պետու-  
թյան կառավարմանը: Դրանով իսկ պրոետարիա-  
տի դիկտատուրան դառնում ե բանվոր դասա-  
կարգի կողմից հասարակության պետական դե-  
կուվարման ավելի ձևուն, և հետեւաբար ավելի  
հզոր սխտեմ, բանվոր դասակարգի դիկտատու-  
րայի բազան ընդարձակվում ե, նրա հիմքն ավե-  
լի հաստատուն ե դառնում:

Այդ շրջադարձը կատարելապես զինված դի-  
մավորելու համար՝ կուսակցությունն այդ շրջա-  
դարձի գլուխ պետք ե կանգնի և լիակատար չա-  
փով ապահովի իր զեկավայր գերը յերկրի գերա-  
գույն որդանների առաջիկա ընտրությունների  
ժամանակ:

Պատրմատ են արդյոք կուսակցական կաղ-  
մակերպություններն այդ տեսակ դեկավարման  
համար:

Ի՞նչ ե պահանջվում կուսակցությունից,  
վորպեսզի նա կարողանա կանգնել այդ շրջա-  
55

դարձի գլուխ, նոր, մինչև վերջը դեմոկրատական ընտրությունների գլուխ:

Դրա համար պահանջվում ե, վոր կուսակցությունն ինքն անցկացնի հետևողական դեմոկրատական պրակտիկա, վոր նա ներկուսակցական կյանքում մինչև վերջն անցկացնի դեմոկրատական ցենտրալիզմի հիմունքները, ինչպես այդ պահանջում ե կուսակցության կանոնադրությունը, վոր նա ինքն ունենա այն անհրաժեշտ պայմանները, վորոնց շնորհիվ կուսակցության բոլոր որդաններն ընտրովի լինեն, վոր քննադատությունը և ինքնաքննադատությունը դարձանան լիակատար չափով, վոր կուսակցական մասսայի առջև կուսակցական որդանների պատասխանատվությունը լիակատար լինի և վոր ինքը՝ կուսակցական մասսան լիովին ակտիվացվի:

Կարելի՞ յե արդյոք ասել, թե կուսակցական բոլոր կազմակերպություններն արդեն պատրաստ են կատարելու այդ պայմանները, թե նրանք արդեն լիովին վերակառուցվել են դեմոկրատական ձևով:

Դժբախտաբար, լիակատար վստահությամբ չի կարելի ասել այդ:

Այդ մասին ե ասում կուսակցության կանոնադրության և ներկուսակցական դեմոկրատիզմի հիմունքների խախտման պրակտիկան, վոր

գոյություն ունի միքանի կազմակերպություններում:

Վորոնք են այդ խախտումները:

Կուսակցական որդանների ընտրականությունը, վորը սահմանված ե կուսակցության կանոնադրությամբ, մի շարք կազմակերպություններում խախտվել եւ կուսակցակերպությունները չեն պահպանում կուսակցական որդանների ընտրությունների այն ժամկետները, վորոնք սահմանված են կուսակցության կանոնադրությամբ: Լայն չափով տարածվել ե զանազան ղեկավարականություններին վորպես շրջկոմների, քաղկոմների, յերկրութեան մարզկոմների, ազգային կոմիտեների կենտրոնների պլենումների անդամներ կոոպացիայի յենթարկելու վոչնչով չարդարացվող պրակտիկան:

Վերադաս կուսակցական որդանների կողմից կուսակցական կոմիտեների քարտուղարներին հաստատելու այն կարգը, վորը սահմանված ե կուսակցության կանոնադրությամբ, մի շարք կուսակցակերպություններում վաստորեն վերածված ե նշանակման սիստեմի: Կուսակոմների քարտուղարների հաստատումը հաճախ տեղի յետնենում նախքան նրանց ընտրվելը տեղական կուսակազմակերպություններում, իսկ գործնականում զրա հետեանքն ե լինում այն, վոր տեղական կուսակցակերպությունները հնարավորու-

թյուն չեն ունենում քննարկելու հանձնարարվող  
աշխատողի թեկնածությունը:

Ընտրական պաշտոններում հաստատելը և  
աշխատանքից հեռացնելը հաճախ տեղի յե ու-  
նենում կուսորդանների հարցման կարգով ըն-  
դունված վորոշումների միջոցով և առանց կու-  
սակցական կոմիտեյի պլենումին հանձնարարելու  
նոր աշխատողների թեկնածությունները, ինչպես  
և առանց այս կամ այն կուսակցական ղեկավարի  
հեռացման դրդապատճառները կուսկազմակեր-  
պություններին բացատրելու:

Ինչ վերաբերում ե կուսորդանների ընտ-  
րություններին, ապա մինչև այժմ ել գոյություն  
ունի մի պրակտիկա, վորի համաձայն թեկնա-  
ծուների ցուցակների քննարկումը տեղի յե ու-  
նենում միմիայն նախնական խորհրդակցություն-  
ներում, ավագների խորհուրդներում, պատգա-  
մավորությունների ժողովներում, ըստ վորում,  
վորպես կանոն, թեկնածությունների շուրջը հենց  
պլենումներում ու կոնֆերենցիաներում վիճա-  
քանություններ չեն բացվում, քվեարկությունը  
կատարվում ե ցուցակով և փոչ անձնապես, ու  
այդպիսով ընտրական պրոցեդուրան հասարակ  
ձեականության ե վերածվում:

Դեմոկրատական ցենտրալիզմի հիմունքների  
խախտման այս բոլոր փաստերը պատ են հասց-  
նում կուսակցությանը, վորովհետեւ դրանք ար-

գելակում են կուսակցության անդամների ակ-  
տիվության աճումը, մեր կուսակցություն կյան-  
քում քաղաքական հաստուկ նշանակություն ունե-  
ցող ակտիվին զրկում են ղեկավար աշխատան-  
քին մասնակցելու հնարավորությունից, կուսակ-  
ցության անդամներին զրկում են կուսորդանների  
գործունեյությանը վերահսկելու իրենց որինա-  
կան իրավունքներից և զբանով իսկ խախտում  
են ղեկավարների ու կուսակցական մասսանների  
ձիւտ փոխհարաբերությունները:

Այդպիսի պրակտիկայի ցայտուն որինակներ  
են հանդիսանում վերջին ժամանակներս Համ.  
Կ (բ) Կ կենտկոմի կողմից հայտնարերված այն  
փաստերը, վորոնք ցույց են տալիս կուսակցա-  
կան-քաղաքական աշխատանքի աղաղակող կեր-  
պով անուշադրության մատնված լինելը Ազով-  
Սևծովյան յերկրկոմում, Կիեվի մարզկոմում և  
Ռևլախինայի Կ(բ)Կ կենտկոմում և այլ կուսկաղ-  
մակերպություններում, վորոնք արտահայտվում  
են կուսակցության կանոնադրության ու գեմո-  
կրատական ցենտրալիզմի սկզբունքների կոպիտ  
խախտումներով՝ կուսորդանների ընտրականու-  
թյունից հեռանալու և կոռպուտացիայի անհանդուր-  
ժելի պրակտիկան մտցնելու իմաստով:

ՀամԿ (բ) Կ կենտկոմի պլենումն ընդգծում  
ե, վոր Կիեվի մարզկոմում ու Ազով-Սևծովյան  
յերկրամասում հայտնաբերված սխալ ղեկավար-

ման որինակները յեզակի չեն, այլ այս կտմ ոյն չափով հատուկ են բոլոր յերկային ու մարզային կուսկաղմակերպություններին:

Համեմ (բ)կ կենտկոմի պլենումը գտնում և, վոր այդ և գրանց նման թերությունների վերացումն այն անհրաժեշտ պայմանն է, առանց վորի չեն կարող իրագործվել կուսակցության այն նոր խնդիրները, վորոնք առաջ են յեկել յերկրի քաղաքական կյանքում տեղի ունեցած շրջադարձի փաստի կապակցությամբ, նոր Սահմանադրության ընդունման ու գաղտնի քվեարկությամբ ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա յերկրի գերազույն որդանների առաջիկա ընտրությունների կապակցությամբ:

Այդ պատճառով անհրաժեշտ է վերակառուցել կուսակցական աշխատանքը, հիմք ունենալով կուսակցության կանոնադրության պահանջած ներկուսակցական դեմոկրատիկմի հիմունքների անդայման ու լիակատար կենսագործումը:

Համեմ (բ)կ կենտկոմի պլենումն անհրաժեշտ է համարում իրականացնել և պարտավորեցնում ե բոլոր կուսկաղմակերպություններին՝ կենսագործել հետեւյալ միջոցառումները:

1. Վերացնել կուսկոմիտեներում վորպես անդամներ կոոպտացիայի յենթարկելու պրակտիկան

և վերականգնել կուսկաղմակերպությունների զեկավար որդանների ընտրականությունը՝ կուսակցության կանոնադրության համապատասխան:

2. Արգելել կուսորդանների ընտրությունների ժամանակ ցուցակներով քվեարկելը: Քվեարկումը կատարել ըստ առանձին թեկնածությունների, ընդումին պահպանելով կուսակցության բոլոր անդամների համար թեկնածուներին մերժելու և նրանց քննադատելու անսահմանափակ իրավունք:

3. Կուսորդանների ընտրությունների համար սահմանել թեկնածուների փակ (գաղտնի) քվեարկություն:

4. Բոլոր կուսկաղմակերպություններում անցկացնել կուսորդանների ընտրություններ, սկսած սկզբնական կուսկաղմակերպությունների կուսկոմիտեներից և վերջացրած յերկրային, մարզային կոմիտեներով ու ազգային կոմիտաների կենտրոններով, ավարտելով ընտրությունները վոչ ուշ մայիսի 20-ից:

5. Պարտավորեցնել բոլոր կուսկաղմակերպություններին՝ կուսակցության կանոնադրության համապատասխան խստիվ պահպանել կուսորդանների ընտրությունների ժամկետները, սկզբնական կուսկաղմակերպություններում—տարին մեկ անդամ, շրջանային ու քաղաքային կազմակերչ

պություններում—տարին մեկ անգամ, մարզա-  
յին, յերկրային ու հանրապետական կաղմակերպու-  
թյուններում—մեկ և կես տարին մեկ անգամ:

6. Սկզբնական կուսկազմակերպություննե-  
րում ապահովել համագործարանային ժողովնե-  
րում կուսկոմներ ընտրելու կազմի խիստ պահ-  
պանումը, թույլ չտալով ժողովների փոխարինու-  
մը կոնֆերենցիաներով:

7. Լիկվիդացիայի յենթարկել ընդհանուր ժո-  
ղովները փաստորեն վերացնելու և ընդհանուր  
ժողովները ցեխային ժողովներով ու կոնֆերեն-  
ցիաներով փոխարինելու այն պրակտիկան, վոր-  
դոյություն ունի մի շարք սկզբնական կազմա-  
կերպություններում:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԶԵԿՈՒՅՈՒՄ ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՊԼԵՆՈՒՄՈՒՄ՝ 1937  
թվի Փետրվարի 26-ին

Շրջադարձ յերկրի քաղաքական կյանքում և մեր խնդիրները . . . . .	5
Կուսակցական որգանների ընտրականուրյան խախ- տումն անհամառնելի յերաշխության կազմակեր- պական սկզբանեակերպի հետ . . . . .	15
Ներկուսակցական դեմոկրատիան կուսակցական կյան- քի անխախտ որենքն ե . . . . .	26
Վերացնել այն ամենը, ինչ վոր խանգարում և կու- սակցական ակտիվի անմանը . . . . .	36
ՀՆԿԵՐ ԺԴԱՆՈՎԻ ՅԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔԸ ՀԱՄԿ (Բ) Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՊԼԵՆՈՒՄՈՒՄ 1937 թվի Փետրվարի 27-ին . . . . .	41
ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՊԼԵՆՈՒՄՈՒՄ ԲԱՆԱՁԵՎՆ ՀՆԿԵՐ ԺԴԱՆՈՎԻ ԶԵԿՈՒՅՄԱՆ ԱՌԹԻՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ 1937 թվի Փետրվարի 27-ին . . . . .	51

Թարգմանիչ Յեղ. Տ.-Միմասյան

Խմբագիրներ՝ Դ. Սահակյան (էջ 1-49)  
Նշ. Մակինց (էջ 49-62)

Տեխն. խմբ. Ա. Խաչատրյան

Սբուղըն Վ. Զիդեջյան

Կոնսորտ Արք. Լ. Արովյան

---

Գլուխով Ավագոր Ի-4877, Հռատ. № 438

Պատկեր № 59, տիրած 13000, ինդեքս  $\frac{\text{II}-84}{\text{PK}}$

Հանձնված և արտադրության 3/IV 1937 թ.

Ստորագրված և տպագրության 14/IV 1937 թ.

Գինը 40 կ.

Հայկուսհրատի տպարտն, Յերևան,

Ալլահվերդյան № 71

«Ազգային գրադարան



NL0180773

ФЕВР. 40 Ч.

202



А. А. ЖДАНОВ

ПОДГОТОВКА ПАРТИЙНЫХ ОРГАНИЗАЦИЙ  
К ВЫБОРАМ В ВЕРХОВНЫЙ СОВЕТ СССР  
ПО НОВОЙ ИЗБИРАТЕЛЬНОЙ СИСТЕМЕ  
И СООТВЕТСТВУЮЩАЯ ПЕРЕСТРОЙКА  
ПАРТИЙНО-ПОЛИТИЧЕСКОЙ РАБОТЫ

Доклад на Пленуме ЦК ВКП(б)  
26 февраля 1937 г.

Аркадиевский издательство, Ереван, 1947